ԷՄՄԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՄՐԵԼՈՒ

ատրիլ

Երևան 2019

ՀՏԴ821.19-3Սիմոնյան
ԳՄԴ 84(5Հ)-4
Ս 504

Սիմոնյան Էմմա
Ս 504 ԱՊՐԵԼՈՒ ապրիլ/ Է. Սիմոնյան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2019.-
64 + 16 էջ ներդիր:

ՀՏԴ821.19-3Սիմոնյան
ԳՄԴ 84(5Հ)-4

ISBN 978-9939-75-324-9

© Է. Սիմոնյան, 2019
© Էդիթ Պրինտ, 2019

Ամառային մի գիշեր երազ տեսա. ամռան տապից շնչահեղձ լինելով՝ գարուն տեսա՝ դրախտային Փարպիի գարուններից մեկը: Եվ այդ գարնան գրկում կռվող զինվորների տեսա: Արթնացա սարսափահար ու հիշեցի հեռուստացույցով տեսած Ապրիլյան քառօրյա հերոսամարտի դրվագները: Տեսարանն անմիջապես գրվեց ուղեղումս: Որոշեցի հանդիպել իմ շրջապատում եղած երիտասարդներին, ովքեր մասնակցել էին պատերազմին:

Երեկոյան այցելության գնացի հեռավոր ազգականներիցս մեկին, որի որդին պատերազմի մասնակից էր. շատ էի ուզում խոսել նրա հետ: Գնացի. նա տանն էր: Խոսեցինք մի քանի կենցաղային հարցերի շուրջ, ապա խոսք բացեցի զինվորական ծառայության մասին:

- Ինչու՞ չես պատմում քո ծառայությունից: Ինձ անչափ հետաքրքիր է. կպատմեմ:

- Ի՞նչ ես ուզում, որ պատմեմ:

- Գիտեմ, որ ապրիլյան պատերազմի մասնակից ես, կպատմեմ այդ մասին:

- Պատմելու բան չկա, - ասաց նա ու այլալված դուրս եկավ սենյակից: Ես շատ զարմացա նրա այս պահվածքից, բայց հետաքրքրասիրությունը խեղդում էր: Նորից մոտեցա նրան. նա, տեսնելով, որ շատ եմ համառում, խնդրեց հանդիպել վաղը՝ եկեղեցու բակում: Ես հրաժեշտ տվեցի ու վերադարձա տուն: Ամբողջ գիշեր աչք չփակեցի, իսկ առավոտյան զանգեցի, և հանդիպեցինք:

- Ինչպես սկսվեց պատերազմը, - անհամբեր հարցրի:

Նա նայեց ինձ, ապա աչքերը հառեց եկեղեցու կողմը: Ես նկատեցի, թե ինչպես նրա աչքերը արցունքոտվեցին: Որոշ ժամանակ անց պատմեց իր պատմությունը և դրան զուգահեռ սկսեց ծխել: Շատ զարմացա, քանի որ ինչպես գիտեի, չէր ծխում, իսկ նա հարցական հայացքիս պատասխանեց.

- Դե, մեկ- մեկ ստացվում ա:

Միասին մտանք եկեղեցի ու վերադարձանք տուն: Նրա պատմածները գամվել էին ուղեղումս:

Հաջորդ օրն իմացա, որ Արագածոտնի մարզի գյուղերից մեկում ապրում է Արմենակ Ուրֆանյանի զինվորներից մեկը: Գնացի նրան այցելության: Տղան սկզբում հրաժարվում էր պատմել, սակայն տեղի տալով իմ խնդրանքին՝ ասաց, որ կպատմի. զանգ տվեց և կանչեց իր ծառայակից ընկերներին: Նրա այս քայլն ինձ տարօրինակ թվաց: «Միթե անձամբ պատմել չի ուզում, - մտածեցի ես, - եթե այո, ապա ինչու»: Բայց ես սխալվեցի. այդպես նա ցանկանում էր ինձ ավելի շատ տեղեկություն հաղորդել: Խոսակցության վերջում նա դուրս եկավ և մի բան ձեռքում ամուր բռնած վերադարձավ:

- Սա Ձեզ, - ասաց ՝ աչքերը խոնարհելով:

- Ինձ, - զարմացած բացականչեցի:

Ձեռքինը փամփուշտ էր, վրան՝ խաչ փորագրված:

- Տեսնու՞մ եք էս խաչը. ես ու ընկերս ենք փորագրել, իսկ հակառակ կողմում «հ» կա, որը նշանակում է հավերժություն: Այսինքն՝ ես ու ընկերս, հավերժ միասին: Պատերազմն սկսելուց առաջ էինք փորագրել, բայց...

Տղան այլևս ոչինչ չասաց. զգացի՝ արցունքները խեղդեցին: Վերցրի նվերս ու հաջողություն մաղթելով՝ հեռացա:

Ես շարունակեցի իմ որոնումները: Այս անգամ եղա Արմավիրի մարզում: Տղաներից մեկը հարցրեց.

- Ինչու՞ եք հետաքրքրվում:

- Գրում եմ, - պատասխանեցի ես:

- Տպագրելու՞ եք:

- ....:

Տղան այլևս ոչինչ չասեց: Ուշադիր նայեց աչքերիս. երևի փորձում էր հասկանալ, թե ինչու նման անստույգ պատասխան տվեցի: Սկսեցինք խոսել բուն նյութից: Կողքիս նստած էր հերոսներից մեկի մայրը. հանկարծ նա դուրս եկավ և որոշ ժամանակ անց վերադարձավ:

- Դու ինձ ստիպեցիր հիշել այդ չարաբաստիկ օրերը, աղջի՛կս: Սա կարևոր նախաձեռնություն է, հանձնի՛ր տպագրության:

Ես այլայլվեցի: Անակնկալի եկած նայեցի նրան, իսկ նա հայացքը փախցրեց:

Բավականին երկար խոսեցի պատերազմի մասնակիցների հետ, հետո տուն վերադարձա: Երկար ժամանակ քնել չէի կարողանում. զինվորի մոր խոսքերը ականջներումս էին, բայց ի վերջո քնեցի:

Հերոսների փնտրտուքներով հասա Շիրակի մարզ: Հանդիպեցի պատերազմի մասնակիցներին և սկսեցի ինձ համար արդեն սովորական, իսկ տղաների համար արտասովոր հարցերս ուղղել: Լսում էի նրանց, հետևում շարժումներին: Ցավալի էր. պատերազմից երկուսուկես տարի էր անցել, բայց այժմ էլ, կորցրած ընկերների մասին խոսելիս, տղաների աչքերը թացանում են, փորձում էին զսպել հուզմունքը և թաքցնել այն վիշտը, որը կեղեքում էր նրանց սիրտը: Ես ինքս էլ հուզվում էի և ցանկանում ընդհատել խոսակցությունը, բայց որոշել էի՝ պետք է սկսածս գործը ավարտին հասցնեմ:

Շիրակի մարզից նոր էի վերադարձել, երբ իմացա, որ իմ փնտրած տղաներից մեկն արդեն Հայաստանում է և կարող եմ հանդիպել: Պայմանավորվեցինք հանդիպել եկեղեցու բակում: (Ապրիլյան հերոսամարտիկներից շատերն էին ցանկանում եկեղեցում զրուցել: Գուցե դա ինչ- որ չափով օգնում էր նրանց): Տղան պատմեց իր գլխով անցածը, բայց երբ հարցեր էի տալիս, խուսափում էր և շրջանցում խոսակցությունը: Տալիս էր մարտական ընկերների անունները և ասում, որ նրանց մասին գրեմ: Այս հարցում ինձ օգնեցին տղայի ծառայակից ընկերները, ու ես գրեցի ...

Երիտասարդներին ամեն անգամ հերոս կոչելիս նրանք շիկնում էին, փոքր-ինչ բարկանում և պահանջում, որ այլևս նրանց այդպես չկոչեմ: Ըստ նրանց՝ հերոս էին միայն իրենց նահատակված ընկերները:

Այսպիսով, ամիսներ շարունակ տևած իմ հևքոտ դեգերումներից հետո ես բավականին նյութեր ունեցա ձեռքիս տակ: Դրանք մշակեցի, դասակարգեցի ըստ հերթականության, բացեցի օրատետրս և ճերմակ թղթին հանձնեցի:

Այսպես սկսեցի իմ պատմությունը.

Հանգեք, իմ որբեր...
իզուր են հուզմունք, իզուր և անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա..
Հ. Թումանյան

Երկու հազար տասնվեց թիվ. գարուն: Այս գարունն էլ սկզբում նման էր այն բյուրավոր գարուններին, որոնք տեսել է հայ ազգը, բայց... Ցրտաշունչ ձմռանը հաջորդող գարունն անչափ գեղեցիկ է Հայաստանում: Թարմ օդ, նորածիլ խոտ, կապուտաչ ձնծաղիկ, մանուշակ, նորաբողբոջ ծառեր. ամեն ինչ գարնան մուտքն է խորհրդանշում, որը, հիրավի, նոր կյանքի խորհուրդն ունի:

Գյուղում սկսվում է վար ու ցանքը: Երկարաշունչ ձմռանից հետո կյանքը սկսում է շարունակվել նոր ավյունով ու պայծառ գույներով: Բայց այսօր Հակոբի տանը տարօրինակ եռուզեռ էր: Որդին՝ Էդգարը, որ լավ կատարած ծառայության համար հինգ օրով տուն էր եկել, արդեն պետք է վերադառնար: Գյուղացիները եկել էին ճանապարհելու զինվորին: Բայց բոլորի աչքերում տխրություն կար. ասես վերջին անգամ էին տեսնում իրենց սիրելի զավակին, որը մեծացել էր իրենց աչքի առաջ և այդքան հարազատ էր բոլորին: Հարևան Մարիամ տատը հիշեց, որ երբ Էդգարը փոքր էր, մի անգամ եկել էր իրենց տուն և գաղտնի հագել իր թոռան զինվորական հանդերձը ու ոչ մի կերպ չէր ուզում հագից հանել: Էդգարի հայրը հիշեցրեց.

- Արդեն ուշ է. Էդգարս պետք է ճամփա ընկնի:

Մայրը գրկեց որդուն, համբուրեց, սեղմեց կրծքին ու սկսեց լաց լինել. նա չէր ուզում որդուն գրկից բաց թողնել:

- Մամ, ժամանակն է, որ ես գնամ: Լաց մի՛ լինի, մամ, բան չմնաց՝ շուտով տուն կգամ:

Երբ դուրս եկավ բակ, որ մեքենա նստի, նրա մոտ վազեց հարևանի փոքրիկ տղան՝ մի բան ձեռքի մեջ պինդ բռնած: Էդգարը գրկեց երեխային, համբուրեց, իսկ երեխան, վերցնելով նրա գլխարկն ու ուրախ-ուրախ գլխին դնելով, ասաց.

- Էդգա՛ր ապեր, վերցրու՛ խաչը: Աստված քեզ ու մյուս ապերներին պահապան: Լա՛վ կպահես, որ երբ զինվոր դառնամ, ինձ տաս:

- Անպայմա՛ն, ախպերս, - ասաց Էդգարը, վերցրեց խաչը, խնամքով դրեց ծոցագրպանը, երեխային իջեցրեց ու բոլորին հաջողություն մաղթելով՝ ճանապարհ ընկավ: Նա հետ նայեց, բայց տեսավ ոչ թե իրեն ճանապարհելու եկածներին, այլ Մասիս սարի ուրվագիծը: Լեռն իր անառիկությամբ նոր ուժ ու եռանդ տվեց կյանքով լեցուն զինվորին: Անկախ իր կամքից խոստացավ, որ եթե հարկ լինի, իր կյանքն էլ կտա հայ ժողովրդի՝ դարեր շարունակ կրած տառապանքի այս անխոս վկայի ազատության համար:

Երեկոյան արդեն զորամասում էր: Ինչ ոգևորություն, ինչ ուրախություն: Առաջին անգամ հասկացավ, որ բանակային ընկերներին հինգ օրում կարոտել էր ավելի, քան ընտանիքի անդամներին՝ մի քանի ամիս չտեսնելով: Երկար զրուցելուց հետո քնեցին, իսկ առավոտյան անցավ զինվորի համար նախատեսված օրակարգին:

Հաջորդ օրն առավոտյան անցան պատրաստության. կեսօրին պետք է դիրքեր ելնեին: Զենքերն արդեն մաքրած ու կարգի բերված էին, մեքենաները՝ պատրաստ: Դուրս եկան երթի, ապա հանդիսավոր ձևով սկսվեց երդման արարողությունը: Այնուհետև շարահրապարակ բերվեց զորամասի դրոշը: Ու որոտաց առյուծ տղերքի ձայնը.

- Ժողովրդի կողմից
- Ժողովրդի կողմից
- ինձ վստահված

- ինձ վստահված
- պետական սահմանին
- պետական սահմանին
- մարտական դիրքը
- մարտական դիրքը
- պատրաստ եմ պաշտպանել անձնվիրաբար:
- պատրաստ եմ պաշտպանել անձնվիրաբար:
- Պարտավորվում եմ
- Պարտավորվում եմ
- սրբորեն կրել
- սրբորեն կրել
- հայրենիքի պաշտպանի հավերժական կոչումը
- հայրենիքի պաշտպանի հավերժական կոչումը,
- լինել զգոն և խիզախ,
- լինել զգոն և խիզախ,
- պատվով կատարել որդիական պարտքս
- պատվով կատարել որդիական պարտքս
- հայրենիքիս,
- հայրենիքիս,
- եկեղեցուս
- եկեղեցուս,
- ընտանիքիս,
- ընտանիքիս,
- ծնողներիս,
- ծնողներիս,
- զինակից ընկերներիս,
- զինակից ընկերներիս,
- հրամանատարներիս
- հրամանատարներիս
- սերը,
- սերը,
- հարգանքն ու պատիվը
- հարգանքն ու պատիվը

- վստակելու համար:
- վստակելու համար:
- Աստծո օրհնությամբ,
- Աստծո օրհնությամբ,
- հզոր հավատով,
- հզոր հավատով,
- միշտ պատրաստ եմ մարտի:
- միշտ պատրաստ եմ մարտի:
- Հանուն իմ,
- Հանուն իմ,
- մեր
- մեր
- և համայն Հայաստանի ապագայի.
- և համայն Հայաստանի ապագայի.
- Երդվում եմ:
- Երդվում եմ:

Երդումն աղոթքի պես տղաները հնչեցրին սրտի թրթիռով. նրանց աչքերը բոցկլտացին հայրենասիրության բոցով: Շեփորների ուրախ նվագի ներքո տեղավորվեցին մեքենաները, խաչակնքեցին և ճանապարհ ընկան: Ճանապարհը երկար էր ու քարոտ: Նրանք երգում էին, կատակում, լիաթոք ծիծաղում: Ճանապարհի կեսն արդեն անցել էին, բայց այլևս մեքենայով գնալ հնարավոր չէր. սկսվում էր մի արահետ, որը չափազանց նեղ էր և միայն ոտքով կարող էին անցնել: Զինվորները վերցրին իրենց ուսապարկերը և սկսեցին առաջ շարժվել: Չնայած ճանապարհի դժվարություններին՝ նրանք երբեք չէին դժգոհում: Հակառակը. սկսել էին երգել ավելի բարձր և ավելի ուրախ: Հանկարծ շարքի միջից լսվեց մի տխրածոր երգ. բոլորը ազդվեցին.

Թռչեի մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն,
Տեսնեի այն առուն,
Կարոտով ես անհուն,
Որ ամեն մի գարուն

Ջրերով վարարուն
Կարկաչում էր սարերում:

Թեքվեի աղբյուրին,
Կարոտած պաղ ջրին,
Լինեի հանդերում,
Մեր կանաչ մարգերում,
Ուր ծաղկունքն են բուրում,
Ուր մանուկ օրերում
Հովն էր ինձ միշտ համբուրում:

Հայրենիքն իմ սրտում՝
Թե չընկնեմ ես մարտում,
Ա՜խ, իմ մայր թանկագին,
Տուն կգամ ես կրկին,
Կսփոփեմ քո հոգին
Համբույրով սրտագին,
Կսեղմեմ քեզ իմ կրծքին:

Երգը տակնուվրա արեց բոլորին. նրանք ընկան հիշողությունների գիրկը և մինչև դիրքեր հասնելը ոչ մեկը չխոսեց. քայլում էին լուռ ու գլխիկոր: Քառորդ ժամ հետո նրանք դիրքերում էին: Մարտական հենակետ հասնելուց հետո ստուգեցին իրենց ուսապարկերը՝ համոզվելու, որ ամեն բան տեղում է, հետո յուրաքանչյուրն ստացավ իր հրամանը, և անցան իրենց խնդիրների կատարմանը:

Խաղաղ ու հանգիստ գիշեր էր՝ ապրիլյան թարմ ու կենսատու օդով լեցուն: Բնությունն այդ գիշեր իր ողջ թովչանքը սփռել էր Հայոց աշխարհի վրա: Լուսինն իր կաթնաձիր լույսով ողողում էր մոխրագույն ամպերը: Երկինքը լի էր ոսկե աստղերով: Սակայն կար մեկը, որ, անտեսելով գարնանային գիշերվա սառը քամին, զգոն կանգնած էր սահմանին: Ավտոմատն ուսին, հայացքը հեռուներին՝ նայում էր նա ու երազում... Հիշում էր տունը հայրենի, մորը, հորը, եղբորը և... նրան: Այո՛, նրա՛ն, որ խոստացավ սպասել: Հիշեց ոսկեծամ մանկության օրերը, և հանկարծ աչքից արցունքի մի շիթ

ընկավ հողի վրա, որին դարեր շարունակ խառնվել էր իր պապերի արյունը: Սթափվեց խոր մտորումներից և շուրջը նայեց. ամեն ինչ հանդարտ նիրհում էր խաղաղ բնության մեջ: Միայն գարնանային պաղ քամին, որ սառը ցնցուղի էր նման, սահմանապահ զինվորների շշուկներն էր խռովում գիշերային անդորր լռության մեջ: Նորից հանգիստ շունչ քաշեց և կրկին ընկավ մտածումների գիրկը:

Հեռվից ինչ-որ անորոշ ձայներ լսվեցին: Էդգարը, զգալով, որ հակառակորդն անհանգիստ է (դիտորդները թշնամու զորքի կուտակում էին նկատել, որը հետզհետե ստվարանում էր), զեկուցեց դիրքի ավագին, վերջինս էլ՝ վերադասին, հրամանատարներին և ստացավ տագնապի հրաման: Բոլոր զինվորներն անցան դիրքն ամրացնելուն: Լսվեց առաջին կրակոցը: Էդգարն ամեն բան հասկացավ:

- Նորի՞ց, քուն չունե՞ն էդ անիծյալները:

- Շշշշշ՜... կամաց, որ...

Բառը սառեց զինվորի շուրթերին. թշնամու գնդակը կպավ ուղիղ սրտին: Խեղդեց արցունքը մի պահ Էդգարին, վշտից իրեն կորցրեց, բայց հետո մտածեց մյուսների մասին և ընկերոջ դեռ տաք դիակը մի ապահով տեղ տանելուց հետո շնչակտուր մոտեցավ Հայկին.

- Հա՛յկ, Արմանը...Արմանը...

Լսվեց երկրորդ կրակոցը, որ խլացրեց Էդգարի վերջին բառերը: Թշնամու զորքի շարժը նկատելուն պես տղաները խրամատում սկսեցին զբաղեցնել իրենց տեղերը: Հարևան դիրքից կրակ ելավ: Էդգարը միանգամից հասկացավ՝ դիվերսիոն փորձ էր: Պետք էր շտապ գործի անցնել: Թշնամին սկսել էր կրակել ծանր տեխնիկայով: Եվ լսվեց հրամանատարի ձայնը.

- Տղե՞րք, բացահայտ հարձակու՛մ:

Թշնամու հարձակման լուրը լսելուն պես զինվորների աչքերում կայծկլտաց կատաղությունը: Երկու կողմն էլ մոլեգնած կրակում էին: Տղաները թաթախված էին փոշու, քրտինքի և արյան մեջ: Նռնակների ձայնը, զինվորների գոռգոռոցները, աղմուկն ու աղաղակը խլացրել էին բոլորին: Սակայն մի խնդիր ծառացավ՝

թերևս ամենասոսկալին... փամփուշտներն սպառվում էին: Նրանք օգնություն էին խնդրել, բայց դեռ տեղ չէր հասել, իսկ թշնամին այնքան շատ էր, որ մտնում էր արդեն խրամատի մեջ: Քառորդ ժամ պայքարից հետո հայերի փամփուշտներն սպառվեցին: Դիմացի վայրենի աղաղակները, վիրավոր զինվորների հեծկլտանքը, զոհված ընկերների կորստյան ցավը ի վերջո թևաթափ արին զինվորներին: Հուսահատությունն ամբողջությամբ կլանել էր նրանց, երբ թնդաց դասակի հրամանատարի խրոխտ ձայնը.

- Տղերք, դիրքը ոչ մի դեպքում չլքեք, եթե պետք լինի, ձեռնամարտի բռնվեք:

Հրամանատարի խոսքերը մի վայրկյանում տարածվեցին, և նրանք նույնիսկ մի պահ մոռացան, որ այլևս կռվելու համար ոչինչ չունեն ու սկսեցին ձեռնամարտի բռնվել: Սա թշնամուն հունից հանեց: Նրանք հայերից այսպիսի դիմադրություն չէին սպասում: Բայց, ավա՜ղ, հնարավոր չէր թշնամու հարյուրավոր զինվորների հետ անզեն երկար պայքարելը: Այն զինվորը, որ պետք է փամփուշտ հասցներ, արդեն զոհվել էր: Երկար մարտնչելուց հետո միայն երկու հոգի ողջ մնացին, մնացածն արդեն զոհվել էին: Էդգարը ոտքից վիրավորված ընկերոջ հետ գնաց հարևան դիրք՝ օգնելու մյուս տղաներին:

Ստեփանակերտից յոթանասունհինգ կիլոմետր հյուսիս՝ Թարթառ գետի միջին հոսանքի աջ կողմում՝ չորս հարյուր հիսուն մետր բարձրության վրա է գտնվում Մարտակերտը: Հյուսիսից սահմանակցում է Շահումյանի շրջանին, արևմուտքում՝ Քարվաճառի ենթաշրջանին, հարավից՝ Ասկերանի շրջանին, հարավ-արևելքում՝ Աղդամի, արևելքում՝ Բարդայի շրջաններին: Մարտակերտի պաշտպանական շրջանի հարյուր տասնվեց դիրքում խոսակցությունն էր ծավալվում.

- Կամանդի՛ր, մի տեսակ ես, ի՞նչ ա եղե:
- Բան չէ, նորմալ ա ամեն ինչ:
- Կես ժամից պիտի պոստավոյին փոխենք:
- Ըհը, եթե կես ժամ ձգենք:
- Բան ասի՞ր կամանդի՛ր:

- Չէ՛, չէ՛...
- Տապիկնա զանգում. մեկդ պատասխանեք:
- Ես կպատասխանեմ, թողեք:
- Կամանդի՛ր, շարժ կա, մեր կողմն են գալիս:
- Ընդունեցի: Տղերք, ելեք, դիրքավորվեք, ես կապ տամ գունդ ու գամ: Չկրակեք հանկարծ, լսու՞մ եք՝ չկրակեք:
- Ա՛յ, թե ինչի համար էիր սենց դիլխոր կամանդի՛ր ջան, չմտածես:
- Պարո՛ն փոխգնդապետ, մեր դիրքի ուղղությամբ են գալիս:
- Քանի՞ հոգի են:
- Թիվը չեմ իմանում. բայց շատ են:
- Մինչև մեր հասնելը պատասխանատվությունը թողնում եմ քեզ վրա, շարժվի՛ր ըստ պահի անհրաժեշտության: Դիմացեք, տղերք, գալիս ենք:
- Լսում եմ:

Ապա առաջ է շարժվում թշնամական հետևակը:

- Ո՞վ ա տեսնում. բոլորը եկա՞ն:
- Էլ մարդ չկա, բոլորը հավաքվել են:
- Դե, ուրեմն կրակեք, սատկացրեք, կրակեք Ձեր ցավը տանեմ, հանուն հայրենիքի կրակեք: Ով ողջ մնաց «օտպուսկ» եմ ուղարկելու՝ կրակեք:
- Տղերք, «օտպուսկ» ա կպել, կրակեք, պատվադիտ չանեք:

Երբ սկսվեցին մարտական գործողությունները, մայոր Մալոյանն իր ընկերների հետ տեղ գրավեց գումարտակի հրամանատարական կետում: Իրավիճակի մասին տեղեկանալուց հետո տագնապի ազդանշան ստացան, մեկնեցին զորամաս և տեսան, որ հրետանին ռմբակոծում է և՛ զորամասը, և՛ քաղաքը: Նրանց հայտնի դարձավ. ծանր մարտ է տեղի ունենում 116- րդ դիրքում՝ վաշտի հրամանատար, կապիտան Արմենակ Ուրֆանյանի ղեկավարությամբ:

Նկատելով թշնամու շուրջ վաթսունից յոթանասուն հատուկջոկատայինների առաջանալը՝ Արմենակը կրակ է բացում: Նա գրանատամյոդով գնում էր դեպի դիտակետ, երբ նկատեց, որ

ВАТ (ականազերծող զինտեխնիկա) է գալիս, որն էլ եկավ հասավ «դամպին», շրջվեց ու հետ գնաց: Այդ ժամանակ Արմենակը գրանատամյոդով խփեց տանկին. այն միանգամից պայթեց: Նույն պահին զինվորներին հաջողվեց այնպիսի հակահարված տալ թշնամուն, որ նրանք սկսեցին նահանջել: Մի քանի րոպե տևեց լռություն, որին հաջորդեց երկրորդ դիվերսիան: Արմենակի հետ համառ պայքար էր մղում շարքային Քյարամը, որ, անկախ իր սիրելի կապիտանի հորդորներից, չլքեց նրան: Կռվի ժամանակ Քյարամը վիրավորվեց: Արմենակը, իր զինվորին վիրավոր տեսնելով, բարձրացավ խրամատից վերև և սկսեց կրակել: Սակայն թշնամու գնդակը մահացու եղավ Արմենակի համար: Քյարամը, թեպետև վիրավոր էր և արդեն փամփուշտ էլ չուներ, պայքարում էր թշնամու դեմ «սապյորնի» բահով:

- Լսում եմ, պարո՛ն գնդապետ:

- Վիճակը ո՛նց ա, գալիս ենք արդեն, շուտով կհասնենք:

- Դեռ դիմանում ենք, բայց շատ են: Վիրավոր ունենք, բայց մեզնից լավ ա կռվում:

- Կեսդ վիրավորներին օգնե՛ք, կեսդ կրակե՛ք:

- Լսում ե՛մ:

Էդիկ Մալոյանն օժանդակ ուժեր չուներ: Իր հետ վերցնելով երկու օգնականներին՝ տեղակալներ Էդուարդ Դելյանին և Հայկ Գալստյանին, տասնմեկերորդ վաշտի հրամանատար Խաչատրյանին, բուժակ Ալիկ Հայրապետյանին, վարորդներ՝ Վահան Սամսոնյանին և Սուրեն Ներսիսյանին, Մալոյանը նետվեց օգնելու վիրավոր մարտիկներին: Դիրքի ավագ Աբաջյանը մայորին զգուշացնում է, որ շրջապատված են թշնամիներով: Հրամանատարը գոռում է քրտնաթոր.

- Լա՛վ ա լինելու, մենք կշրջանցենք դիրքն ու կգանք օգնության:

Բայց, ավա՛ղ, Քյարամն այդպես երկար մաքառել չկարողացավ: Նա դարձավ հավերժի ճամփորդ: Փախուստի դիմած թշնամին գոնե մի բանով իր արած վախկոտությունը քողարկելու համար խոշտանգեց զինվորին և տարավ իր հետ ... Վրեժի անհագ

ցասումը պատեց հայ զինվորին: Սա արդեն աններելի էր: Պետք էր առնել ընկերոջ վրեժը: Հայ մարտիկը, մոռացած ամեն ինչ, իրեն նետեց կռվի, սակայն այս անգամ նրա աչքերում միայն զոհված ընկերներն էին: Կրակում էր վրեժի մարմնացում դարձած՝ աշխատելով մի հայ զինվորի փոխարեն տասին սպանել: Նրանք, մոլի մարտիկներ դարձած, կռվի էին նետվում: Բայց հայերն էլ ուժ չունեին պայքարելու, իսկ թշնամին բավականին մոտ էր: Գրադները, մինամյոտերը, պուշկան այնքան առատ էին տեղում, որ ասես անձրև լիներ: Գնդացրորդ Անդրանիկը վազելով եկավ, որ կրակ արձակի «դամբից», բայց վիրավորվեց: Կրտսեր սերժանտ Ռոբերտը նկատեց, որ Անդրանիկը վիրավոր է և նետվեց նրան օգնության: Ռոբերտին հաջողվեց վիրավոր ընկերոջը դիտակետ բերել: Նա ծնկներին էր դրել Անդրանիկին և հավատում էր, որ շուտով մի օգնություն կհասնի, որ նա կփրկվի, բայց այլ էր կամքը Բարձրյալի: Անդրանիկը փակեց աչքերը:

Ռոբերտը շարունակում էր մարտնչել, սակայն նա արդեն ոտքից վիրավոր էր: Հանկարծ նկատեց, որ թշնամին գալիս է իր ուղղությամբ: Փամփուշտներն արդեն սպառվել էին, միայն մի նռնակ էր մնացել իր մոտ: Նա քաջարի և անձնազոհ հայ մարտիկին վայել որոշում կայացրեց... Հիշեց իր սիրելի հրամանատարի՝ Արմենակի խոսքերը. «Հարձակման դեպքում նռնակը կարող է վերջին փրկությունը դառնալ անձնազոհ մարտիկի համար»: Եվ այդպես էլ եղավ. Ռոբերտը նախընտրեց զոհվել՝ իր հետ տանելով մի քանի թշնամու, քան գերի ընկնել:

- Պարո՛ն գնդապետ:

- Ասա՛, տղե՛ս:

- Պարո՛ն գնդապետ...խնդրում եմ բոլորին փոխանցես, որ...որ էս դիրքում իմ տղերքի արյունն ա թափվել, ստեղ իմ ախպերներն են կռվել, էս հողի վրա պայքար ա եղել, ես էլ հիմա «կալցոն» քաշում եմ ու ուզում եմ բոլորին փոխանցես, որ էս դիրքը հանձնողի մերը ...

- Ինչ եղավ, պատասխանի՛, հրամայում ե՛մ, պատասխանի՛... Աբաջյա՛ն, Աբաջյա՛ն:

Ռոբերտը փակեց աչքերը և քաշեց նռնակի «կալցոն»: Վայրկյաններ անց նռնակի ձայնը խլացրեց: Ամեն ինչ կորավ փոշու և մշուշի մեջ:

Մալոյանն ու իր զինվորները նպաստավոր պայմանների շնորհիվ կարողացան թիկունքից մոտենալ դիրքին, բայց վիրավորներին փրկել չկարողացան: Ցասումը համակեց նրանց: Երկու շարքայիններն ու բուժակը կրակ բացեցին գնդացրից, իսկ սպաները գրոհեցին: Երբ մոտեցան մարտական դիրքին, հարյուր հիսունից ավել թշնամի կար այնտեղ, սակայն դա չվախեցրեց հայ քաջերին. նրանք որոշեցին՝ դիրքն ազատեն թշնամուց և վրեժ լուծեն զոհված ընկերների համար: Հերոսներին հաջողվեց դուրս շպրտել թշնամուն մեր դիրքերից:

...Թեժ կռիվը շարունակվում էր ողջ գիշեր: Ասես Ավարայրի ճակատամարտը նորից էր կրկնվում, բայց այս անգամ նոր թափ ստացած:

Ջաբրայիլի շրջանում՝ Չոջուք Մարջանի գյուղից երկու ամբողջ ինը կիլոմետր հեռավորության վրա է գտնվում Լելե Թեփին՝ Վարազաթումբը:

Այստեղ տեղակայված էր գնդապետ Արարատ Մելքումյանի զորամասը: Նա խառնաշփոթ պահին կարողացավ ճիշտ հասկանալ . կատարվողը ոչ թե դիվերսիոն փորձ էր, այլ լայնածավալ հարձակում: Հարկավոր էր անցնել հակահարձակման և թույլ չտալ, որ հակառակորդը տարածվի: Ձևավորվեց խմբավորում, որի ղեկավարը հենց ինքն էր: Խնդիրը հետևյալն էր.

- Կասեցնել, հակագրոհել, վերականգնել առաջնագիծը:

Նրա զորամասի ստորաբաժանումներն առաջնագիծ հասան և մարտի բռնվեցին: Մելքումյանը մարտնչում էր անձամբ՝ օրինակ ծառայելով իր զինվորներին: Նա և՛ հրետանու կրակն էր ղեկավարում, և՛ անձնակազմին ոգեշնչում:

Շուրջ քսան րոպե էր, ինչ թշնամին հրետակոծում էր: Վարազաթումբ բարձունքի հարյուր տասներկու մարտական դիրքում դիրքի ավագ Ադամի ղեկավարությամբ յոթհոգանոց անձնակազմն անցնում է մարտական գործողության: Անձնակազմի տղաներն էին՝ սերժանտ Կարեն Ներսիսյանը, շարքայիններ Բագրատ Ալեքսանյանը, Տիգրան Բերակչյանը, Անդրանիկ Գրիգորյանը, Ժորա Եսայանը, Բորիս Օզմանյանը:

- Տղերք, պատրաստ. անցնում ենք շրջանաձև պաշտպանության:

- Կա՛պ տվեք հրամանատարին:

- Էս ինչքա՞ն շատ են:

- Տղերք, չվախենա՛ք: Հիշե՛ք էն երդումը, որ տվեցինք դիրքեր բարձրանալիս: Եկեք այնպես կռվենք, որ թշնամին իմանա, թե ո՛վ ա հայ զինվորը: Կռվենք հանուն մեր հայրենիքի, իսկ եթե մեզանից որևէ մեկը զոհվի, իմացե՛ք, որ չկա ավելի երանելի մահ, քան հանուն հայրենիքի ազատության զոհվելը: Դե, առա՛ջ:

- Տղերք, դուխով:

Ռոպեներ անց դիրքի վրա են հարձակվում թշնամու հարյուրավոր գրոհայիններ: Սկսվում է մարտը: Կրակոցներին թիվ ու հաշիվ չկար: Իրավիճակը դժվարին էր, ելքը՝ անորոշ: Դիրքը շրջապատվեց թիկունք ներխուժած ադրբեջանական հատուկջոկատայիններով ու տանկերով, սակայն երիտասարդ մարտիկներին օգնության հասավ վաշտի հրամանատար Հարություն Նալբանդյանը: Երկու կողմն էլ կռվում էր կատաղի: Ադամը վազում էր ամբողջ դիրքով և գոռում.

- Տղերք, դիմացե՛ք, կապ եմ տվել, տեղեկացրել եմ: Շուտով կգան կհասնեն. չմտածե՛ք: Մի փոքր էլ ու վերջ. դիմացե՛ք:

Հոգնածությունը տանջում էր բոլորին, բայց պետք է դիմանային: Ադամը նորից կապ տվեց.

- Պարո՛ն փոխգնդապետ, էլ ուժ չունենք, տղերքի կեսն արդեն վիրավոր են:

- Հասանք, տղե՛ս, հասանք:

Երկար ժամանակ զենքերի կրակոցներն ու նռնակների պայթյունների ձայները չէին լռում: Երբ տղաները քիչ-քիչ կորցնում էին հույսերը, որ իրենց օգնություն կհասնի, օգնության են շտապում զորամասի հինգ սպաները՝ մայոր Սուրեն Մելքումյանը, փոխգնդապետներ Ալեքսան Առաքելյանը, Ռոման Պողոսյանը, Օնիկ

Գրիգորյանը, ավագ լեյտենանտ Մաքսիմ Գրիգորյանը և բուժակ, կրտսեր սերժանտ Սաշա Գալստյանը. նրանց տեսնելը նոր ուժ է տալիս տղաներին: Զինվորների աչքերը մի պահ վառվում են ուրախության կրակով, որ սիրելի հրամանատարները մենակ չթողեցին իրենց և եկան միասին հաղթահարելու այս դժվարին իրավիճակը: Սպաները այնպիսի հուժկու թափով էին կռվում, այնպես էին ոգևորում զինվորներին, որ նրանց ձայնից հողը դողդում էր ոտքերի տակ: Սա թշնամու համար անակնկալ երևույթ էր. նա չէր էլ կարող պատկերացնել, որ հրետանակոծությունից հետո հայերը կկարողանան այսպիսի ուժով հակահարված տալ իրենց: Երբ արդեն փամփուշտները վերջանում էին, փոխգնդապետ Ալեքսան Առաքելյանը հրամայեց.

- Տղե՛րք, նահանջե՛ք:

Զինվորները չենթարկվեցին հրամանին: Նրանք չթողեցին իրենց դիրքն ու հրամանատարին: Մինչև վերջին փամփուշտը տղաներն անձնվիրաբար մարտնչում են՝ թշնամու բազմաթիվ զինվորներ ոչնչացնելով: Առավոտյան ութին, Ադամը զորամասի հրամանատարության հետ վերջին անգամ կապ է հաստատում և հաղորդում.

- Էլ չենք կարա, արդեն դիրքի մեջ են:

Տասը րոպե անց Ադամի ռադիոկապով խոսում է մի ադրբեջանցի և ասում.

- Բոլորն արդեն ոչնչացված են:

Նրանցից քիչ այն կողմ՝ հարյուր տասնհինգ մարտական դիրքում, շարքային Գրիգոր Հարությունյանը տեղեկացնում է, որ իրենց դիրքի դիմաց շարժ է նկատվում: Ավագ լեյտենանտ Աշոտ Շահբազյանը վերցնում է զենքը, դիրքից դուրս գալիս և հրամայում.

- Քթներդ չխոթե՛ք, հետ քաշվե՛ք:

Նա մենակ դուրս է գալիս թշնամու դեմ և սկսում աջուձախ կրակել: Աշոտի արձակած գնդակները մեկը մյուսի հետևից տապալում էին հակառակորդին, բայց արդեն փամփուշտները սպառվում էին: Նա կապ տվեց.

- Հնարավոր չէ պահել, ինձ ուժ է պետք:

Օգնությունն ուշանում էր, իսկ Աշոտը վիրավորվում է: Նրա հրամանատարության ներքո գտնվող զինվորներից մեկը՝ սերժանտ Արման Ավետիսյանը, առանց մտածելու նետվում է սիրելի հրամանատարին բերելու: Տեղ հասնելուն պես տեսնում է, որ թշնամին խրամատաբջիջների մեջ է: Հակառակորդը, տեսնելով օգնության շտապող զինվորին, կրակ է բացում. Արմանը կարողանում է հասնել Շահբազյանին: Սերժանտ Ավետիսյանն ասում է.

- Պարո՛ն ավագ լեյտենանտ, եկել եմ քեզ օգնեմ: Պիտի իրար հետ դուրս գանք էստեղից:

Արմանը սիրելի հրամանատարին դնում է ուսերին և մոտ հինգ մետր նրան այդպես տանելուց հետո զգում, որ մի բան սաստիկ ուժգնությամբ կպավ ձախ ոտքին. նա ընկավ գետնին: Սերժանտ Ավետիսյանը երկու անգամ փորձ արեց կանգնելու, սակայն չկարողացավ: Երբ երրորդ անգամ փորձեց, շոշափեց ոտքն ու ծակոց զգաց: Նայեց ու տեսավ, որ ոտնաթաթն այլևս չկա... Արմանն ու Շահբազյանը մնացին կրակի տակ:

Այս ամենը տեսնելով՝ օգնության են գալիս Անդրեասյան Արմանն ու Սիմոնյան Ազատը: Քանի որ Արմանը սաստիկ վիրավոր է, Շահբազյանը հորդորում է զինվորին հեռացնել վտանգավոր հատվածից և տղաներն իսկույն հրամանը կատարում են. Արմանին տարան գետնատնակ, ապա, երբ ցանկանում էին տեղափոխել հոսպիտալ, նորից հակառակորդը կրակեց զինվորի ոտքին:

Ժամեր շարունակ Շահբազյանը վիրավոր պայքարում էր ու սպասում օգնության, սակայն հակառակորդն արդեն հասել էր իրեն: Թշնամին նրան մոտեցավ տանկով, ապա շրջապատեցին ու սկսեցին չորս կողմից կրակելը: Այնուհետև քաջարի լեյտենանտին կապեցին տանկի հետևից և քարշ տալով տարան... ու խաչեցին...

Աշոտի մահից հետո թշնամին առաջ շարժվեց: Հերթը տղաներինն էր. պետք է թույլ չտային, որ նրանք առնեին իրենց դիրքը: Երկար մարտնչելուց հետո զոհվեցին Արման Անդրեասյանը, Նորիկ Սարգսյանը, Արթուր Գևորգյանը, Գրիգոր Հարությունյանը, Ազատ Սիմոնյանը:

Էդգարը նորից խրամատում է.

- Տղերք, մի բան հիշեցի, որն ուզում եմ ձեզ անպայման պատմել:

- Ասա՛, Էդ, տեսնենք, թե ինչ ես ասում:

- Պապիկս կռիվ տեսած մարդ էր: «Պավեսկա» ստանալուս օրը կանչեց իր մոտ ու ասաց.

- Էդգա՛ր ջան, ես կռվել եմ, հետո՝ որդիներս, հիմա էլ հերթը քոնն է: Իմ ախպերներն ու որդին զոհվեցին պատերազմի դաշտում՝ զենքը ձեռքներին: Նրանցից և ոչ մեկը չփախավ, չբողոքեց, նույնիսկ մի հուսահատական խոսք չասեց: Նրանք կռվում էին հանուն ազատության, հանուն լեզվի ու քրիստոնեության պահպանության: Ինքդ էլ շատ լավ գիտես, որ հայ ժողովուրդը դարերով կռիվ է տվել էդ երեք բանի համար՝ քրիստոնեության, լեզվի և ազատության: Ամեն հողի կոշտ ներծծված է մի քաջ հերոսի արյամբ: Բանակ գնալուց առաջ ուզում եմ, որ մի բան լավ իմանաս. կործանված է այն ազգը, որտեղ զինվորը վախկոտ ու մորթապաշտ է: Միշտ քա՛ջ եղիր ու թույլ մի՛ տուր, որ թշնամին տեսնի թիկունքդ: Պայքարի՛ր մինչև վերջին շունչդ: Իմացի՛ր, որ եթե թույլ տաս թշնամին անցնի սահմանը, կհոշոտի ամբողջ ազգիդ: Մեր հայ զինվորները քաջ են, անվախ, մեր ժողովուրդը՝ պայքարող, անարդարության առաջ գլուխ չխոնարհող, մայրերը՝ առաքինի, հավատարիմ, նվիրված. երբեք ոչ մի հայ մայր իր երեխային օրորելիս չի սովորեցնում սպանել թշնամուն, այլ՝ երգում է օրորոցային.

...Բազեն, որ եկավ, որդիս լռեցավ,
Ռազմի երգերից իսկույն քնեցավ:

Մեր ագրեսիվ հարևանը դա մեծ հաճույքով է անում: Սա մեր ու թշնամու տարբերությունն ա, հասկանում ես: Քո ու քո նմաններից է կախվեծ մեր ապագան, ձեր մեջ է դրված ազգային ինքնագիտակցության գաղափարները, որոնք եկող սերունդներին պիտի փոխանցեք: Կռվե՛ք, պայքարե՛ք, հաղթե՛ք, բայց ոչ երբեք պարտվե՛ք: Կռվի դաշտում անհաջողություններ էլ են պատահում:

Հա՛, ճիշտ եմ է ասում: Եղել է, որ բախտի անիվը թշնամու ձեռքում էլ է եղել, բայց մենք էլի ուժներս հավաքել ու նրան հակահարված ենք տվել: Ա՛յ, ուշադիր դեմքիս սպիներին նայի. ամեն մեկը մի պատմություն ունի, բայց դրանցից և ոչ մեկն ինձ չկոտրեց: Ուրեմն, լսի՛ր պապիդ խոսքը՝գնա՛, ծառայի՛ր, եթե Աստված մի արասցե պատերազմի մեջ ընկնես, անձնվիրաբար մարտնչի՛ր, իսկ երբ Աստծո կամոք տուն վերադառնաս ու ամուսնանաս, շատ զավակներ ունեցի՛ր: Մեր ազգը պիտի շատանա, մեր բանակը՝ հզորանա, երկիրը՝ խաղաղվի, բայց լավ հիշի՛ր՝ ոչ մի դեպքում ու ոչ մեկին հայրենիքիցդ բարձր չդասես, հրամանատարներիդ խոսքը չանտեսես, ծառայակից ընկերներիդ հարազատ եղբոր նման կսիրես: Մեր ազգի պատմությունն էլ մտքիցդ չհանես. որդիներիդ կպատմես ինչպես ես՝ հորդ, հայրդ՝ քեզ: Աստված քեզ ու ծառայակիցներիդ թող պահապան լինի:

- Ու գիտեք, տղերք, վերջում լաց եղավ: Ես այդ ժամանակ նրա խոսքերի իմաստն ամբողջովին չկարողացա հասկանալ: Էսօր, երբ մենք ենք պատերազմ տալիս, ա՛յ, հիմա նոր եմ հասկանում, թե ինչքան հզոր պատգամ էր պապս ինձ հղում: Մանկությունից հասակ եմ առել զիվորականի ընտանիքում: Մանուկ ժամանակ հեքիաթներ լսելու փոխարեն՝ պատերազմից դեպքեր եմ լսել: «Պատերա՛զմ, պատերա՛զմ». այս բառերը լսել եմ շատ փոքր տարիքից, բայց երբեք չեմ կարողացել պատկերացնել նրա ամբողջ էությունը: Մանկություն, հետո դպրոցական տարիք, ու ամեն տարիքում պատերազմը մի կերպ էի ընկալում, բայց էսօր ես լիարժեք հասկացա, թե ինչ է պատերազմը, ասել է թե՝ ընկերդ կողքիդ զոհվում է, բայց դու նրա կյանքը փրկել չես կարող, չգիտես հաջորդ վայրկյանին թշնամու արձակած գնդակը ում կամ ինչին կկպնի, արդյոք նորից կտեսնես սիրածդ աղջկան, կկարողանաս նորից վայելել մորդ եփած ճաշերը, որոնց հոտն առնում ես այստեղ՝ ամեն պահի: Կապ չունի, որ մենք այստեղ քաղցած չենք մնում. միևնույնն է, չենք կշտանում էնպես, ինչպես մամայի եփած ճաշերից: Էսպես կարող եմ երկար բացատրել տղերք, թե ինչ է պատերազմը, բայց...:

Էդգարի խոսքերն այնպես էին ազդել տղաների վրա, որ նրանք ոչինչ ասել չէին կարողանում. տևական ժամանակ մարգարեական լռություն էր իջել նրանց վրա, երբ նորից թշնամին սկսեց հրթիռակոծությունը:

Նկատելով թշնամու առաջխաղացումը՝ մարտական գործողության են անցնում տանկիստ Վահե Զաքարյանը, սերժանտ Նորիկ Գասպարյանը և լեյտենանտ Հայկ Գրիգորյանը: Տանկի անձնակազմին հաջողվում է մի քանի անգամ խոցել գրոհող թշնամուն՝ ոչնչացնելով հակառակորդի բազում զինվորներին: Բայց թշնամու կողմից ուղարկված անօդաչու թռչող սարքը դառնում է նրանց մահվան պատճառը:

«Քաջերի ջոկ». ահա՛, այն ջոկը, որի անդամներից է հրամանատարի տեղակալ, հենակետի ավագ, սերժանտ Գուրգեն Հովհաննիսյանը: Լսելով թշնամու հարձակման մասին՝ Գուրգենն ասում է տղաներին.

- Տղե՛րք, չենք նահանջելու, չենք զոհվելու, լսո՛ւմ եք: Մենք դեռ պիտի իջնենք զորամաս, դեռ պիտի իրար հետ ծնունդ նշենք:

Դիտարկում կատարելուց հետո տեսնում է, որ թշնամու մոտ երկու հարյուր զինծառայող գալիս է իրենց ուղղությամբ: Ավագ սերժանտ Հովհաննիսյանը անձնակազմին դիրքավորում է մոտակա թմբի վրա և թշնամու առաջին խումբն իրենց վրա նետվելուն պես գնդացրորդ Միսակ Կիրակոսյանին հրահանգում կրակել:

- Միսա՛կ, ամեն կիրակի կրակայինի ես գնացել, տեսնենք՝ ինչ ես սովորել:

Միսակին հաջողվեց ոչնչացնել թշնամու վեց զինվորի: Տղաները ուրախության աղաղակ սկսեցին բարձրացնել. այս տեսարանը նրանց նոր ուժ հաղորդեց:

Վարպետությամբ աչքի ընկան նաև Գրիգոր Գրիգորյանը, Դանտես Ջանգոյանը, Կորյուն Պապլարյանը, ովքեր կրակում էին անվրեպ:

Գուգեն Հովհաննիսյանը տեղեկանում է, որ հակառակորդի երկու զինվոր մտնում են խրամատ: Գուրգենն առանց զենք վերցնելու վազում է նրանց ուղղությամբ: Ավագ սերժանտ Հովհաննիսյանի մոտ միայն երկու նռնակ կար: Թշնամին, տեսնելով դեպի իրենց վազող հայ զինվորին, ռուսերենով հարցնում է ընկերոջը.

- Մոտդ նռնակ կա՞:

- Կա՛:

Նա վերցրեց նռնակը և ցանկացավ նետել հայ զինվորի ուղղությամբ, սակայն չհասցրեց. ավագ սերժանտ Հովհաննիսյանը արդեն քաշել էր նռնակի օղակն ու արագ նետել դեպի թշնամին:

Փորձառու զինվորականները Գուրգենին բնութագրում են որպես «գեներալի ինքնուրույնությամբ ժամկետային զինծառայող»: Ահա՛ հայ զինվորի ուժի ու հնարամտության կրողը:

Հադրութի ստորաբաժանումը, որտեղ ծառայում էին Նվերը, Ղարիբն ու Ազնաուրը, շտապ մեկնեցին Ջաբրայիլ: Գնդապետներ Արարատ Մելքումյանն ու Վրեժ Գրիգորյանը մարտիկներին գրոհի առաջնորդեցին: Նրանց հաջողվեց թշնամուց հետ վերցնել գրավված դիրքերը, բայց դրանք գտնվում էին խաչաձև կրակի տակ: Հայերը հետ քաշվեցին մյուս բարձունքը: Հայ տանկիստների ջախջախած ադրբեջանական տանկերը բաց դաշտ դուրս չէին գալիս, բայց գնդակոծում էին բարձունքը: Երբ նռնականետեր բերեցին, տղաներին հարցրին.

- Տղե՛րք, ո՞վ կարա կրակի:

- Ես:

- Ես:

- Ես:

- Դե ամեն մեկդ մի հատ վերցրեք: Դուք երեքով պարտավոր եք էս տասը-տասնչորս սնարյադով տանկերի դեմն առնել: Մենք ստեղից է՛լ տեղ չունենք գնալու:

Ադրբեջանական քսան տանկ, տասնյակ հրանոթներ ու ականանետեր կատաղի կրակ թափեցին բարձունքի պաշտպանների վրա: Ազնաուրը, Նվերն ու Ղարիբը իրենց գրանատամյոդներով չթողեցին, որ հակառակորդը մոտենա: Նվերը երեք թշնամի ոչնչացրեց:

Վերադասից ահազանգ է գալիս, որ հարձակում է, դիրքեր են

գրավել և օգնություն է պետք: Մինչև գնալը մայոր Արթուր Հովսեփյանը նստում է մեխանիկ-վարորդի խցիկում և դիմում Տիգրանին.

- Դու՞ ես գումարտակի լավագույն մեխանիկ-վարորդը:

- Ճիշտ այդպես, պարո՛ն մայոր:

- Դե, տեսնենք դու ես լավագույնը, թե ես:

- Տեսնենք:

Ճանապարհ ընկան: Նրանք Ֆիզուլիից հասան Լալայկա՝ Վարազաթումբ: Երբ լուր եկավ, որ հայկական առաջնագիծ է ներխուժել թշնամին, նրանց դիմավորեցին հայկական տանկերը: Առաջինը մարտի նետվեց T72 տանկը, որի անձակազմի տղաներն էին՝ տանկի հրամանատար Բենիամին Եղոյանը, նշանառու-օպերատոր Վլադիմիր Ալիխանյանը, մեխանիկ-վարորդ՝ Տիգրան Աբգարյանը: Զինվորները մայոր Հովսեփյանից խնդիր ստացան.

- Տեսնո՞ւմ եք թուրքի գրավված դիրքը, իրանց դրոշն են դրել մեր մատուռի մոտ, վերջում դրոշը չպետք ա էնտեղ լինի, բայց խրամատ չմտնեք:

Ավագ լեյտենանտ Բենիամինը իր T72 տանկով ջախջախեց հակառակորդի նորագույն T90 տանկերը: Նա կատարյալ մարտ էր վարում, տանկը վարում էր անհավանական արագությամբ, իսկ Վլադիմիրի բաց թողած արկերը խոցում էին նշանակակետերը: Նրանց հաջողվեց ոչնչացնել հակառակորդի երեք տանկ և հասնել մարտական դիրքեր:

- Վերադարձեք, հերիք ա, ապրեք:

Նրանք միահամուռ որոշում կայացրին.

- Մենք հետ չենք գա, մինչև թուրքի դրոշը չտապալենք, մինչև վրայով չանցնենք:

Դրանք այն դիրքերն էին, որոնք գրավել էր հակառակորդը հսկայական կորուստների ու հայ զինվորի արյան գնով և իր դրոշը բարձրացրել: Սակայն Բենիամինի տանկը ներխուժեց այդ դիրքերից մեկը և տրորելով թշնամու դրոշը՝ հայ զինվորներին նոր հույս ու ոգևորություն հաղորդեց:

- Պարո՛ն հրամանատար, խնդիրը կատարված է:

- Ապրեք, տղերք ջան: Բենո՛, զգո՛ւյշ եղեք ու շուտ հետ եկեք դիրք:

- Լսո՛ւմ եմ:

Նրանք Աստծո կամոք ապահով վերադարձան դիրք: Այո՛, խնդիրը լուծված էր, և անչափ ոգևորված էին:

Հրամանատարը շատ զայրացավ, որ իրեն չէին լսել, բայց բոլորին էլ համբուրեց և ասաց.

- Քանի դեռ հայկական բանակն ունի ձեր նման խիզախ զինվորներ, մենք երբեք պարտություն չենք կրի:

- Ծառայում եմ Հայաստանի Հանրապետությանը:

Տեղեկանալով լայնածավալ հարձակման մասին՝ նշանառու օպերատոր Անդրանիկ Աթալյանն իր ընկերների հետ Ֆիզուլիից մեկնում է Ջրական՝ օգնելու զինվորներին: Նշված վայր հասնելուց հետո հրաման ստացան.

- Շարժվեք առաջ՝ դեպի հակառակորդը:

Ճանապարհին նրանց տանկը խոցեցին: Անդրանիկն անմիջապես պտտվեց ընկերոջ՝ Զաքարյան Ռազմիկի կողմը, կարծելով, որ վերջինս զոհվել է: Նա փորձում էր բացել տանկի դիտանցքը, բայց այն երկաթ էր և արկի պայթյունից չափազանց տաքացել էր: Նրան հաջողվեց բացել, բայց պետք էր մի բան անել. տանկն այրվում էր, հերոսը՝ նույնպես: Վրա հասավ ամենասոսկալին. Անդրանիկը կորցրեց տեսնելու կարողությունը: Աջ աչքը գրեթե չկար, իսկ ձախն այրվել էր: Հերոսն այդպես ամեն կերպ փորձում էր բացել դիտանցքը, և երբ արևի ճառագայթն ընկավ ձախ աչքին և այրոց զգաց, նա հասկացավ, որ հաջողվել է որոշ չափով բացել: Երրորդ անգամ ձեռքով հարվածեց ու ամբողջությամբ բացվեց: Կրակի զորեղ ճնշումը Անդրանիկին դուրս շպրտեց: Նա հազիվ կարողացավ իրեն պահել, որ տանկից չընկնի ու մտածեց ընկերոջ մասին.

- Հանեմ Ռազմիկի դիակը, որ գոնե չայրվի:

Ուրախություն Անդրանիկի՝ Ռազմիկը ձեռքը շարժեց: Երջանկությունը պարուրեց հերոսին: Նա մոռացավ իր այրվածքների մասին և մեծ դժվարությամբ հանեց ընկերոջը տանկից ու գետին գցեց, որ ավելի չվնասվի: Իսկ այդ ընթացքում տանկի մեխանիկ -

վարորդ Ռուդիկ Սարգսյանը ջանում էր տանկը դուրս բերել կրակի դաշտից: Նա ևս դուրս եկավ: Անդրանիկը, քաշելով Ռազմիկին, տարավ սարի տակ՝ մի ապահով տեղ, գոտին հանեց և կապեց վիրավոր ընկերոջ ձեռքը, որ արնահոսությունը կանգնեցնի: Հանկարծ նրանց մոտեցավ հրամանատարներից մեկը: Նա կապ տվեց զորամաս և բժշկական օգնության մեքենա պահանջեց: Ռոպեներ անց մեքենան եկավ և վիրավոր տանկիստին տարան հոսպիտալ:

Թալիշի 170-րդ դիրքում հերթապահ էր Մերուժան Ստեփանյանի հետախուզական դասակը:

Մերուժանը զանգ ստացավ մորից.

- Տղա՛ս, լրատվամիջոցներով տեղեկություններ ենք ստանում, որ պատերազմ ա:

- Մա՛մ, մի հավատա, ինչ ասես՝ գրում են:

- Դու ո՞նց ես:

- Շատ լավ եմ, փառք Աստծո: Մա՛մ, գնա եկեղեցի իմ ու իմ տղերքի համար մո՛մ վառի:

- Հա՛, անպայման կգնամ:

- Մա՛մ, չմոռանա՛ս, չուշացնե՛ս...

- Եղավ, տղե՛ս:

Մերուժանի մայրն անմիջապես գնաց եկեղեցի:

... Իրավիճակը սահմանին գնալով սրվում էր:

Հակառակորդին նկատելուն պես Սամվելը տեղեկացրեց անձնակազմին: Մերուժանը անձնակազմին դուրս է հանում, դիրքավորում: Դիրքի վրա թափվում է հրետանային հուժկու կրակ: Հակառակորդն անցնում է գրոհի: Հարյուրավոր պատրաստված գրոհայիններին դիմադրում էր երիտասարդ հետախույզների տասնյակը: Անօդաչու թռչող սարքը վերևից հետևում էր հայերի ամեն մի շարժին: Կրակոցների դադարելուց հետո զինվորները տեսան, որ մոտ ութսուն-իննսուն հոգի բացահայտ հարձակվում են իրենց դիրքի վրա: Տղաներն անցան հարձակման: Այս կատաղի գոտեմարտում Մերուժան Ստեփանյանի դասակը փայլուն հակահարված տվեց ու դեն շպրտեց ադրբեջանական հատուկջոկատայիններին՝ առանց որևէ կորուստ տալու:

Մերուժանը հրամայեց.

- Կրակե՛ք իմ կրակած տեղի վրա: Ինձ մոտ գիշերային տեսանելի սարք կա:

Ադրբեջանցիները դիմեցին նոր գրոհի: Ինը հայ մարտիկներ տասնչորս ժամ էր, ինչ մարտնչում էին, սակայն ռազմամթերքն արդեն վերջանում էր: Լուր եկավ, որ կողքի դիրքն այլևս չկա: Մերուժանը հրաման տվեց.

- Դիրքը չլքե՛ք:

- Կամանդի՛ր, զանգի մեր գումարտակի հրամանատարին ու ասա, որ բլինդաժն արդեն քանդված ա ու փամփուշտ էլ չունենք:

Մերուժանը հրամայեց.

- Պարո՛ն հրամանատար, հարձակումը շարունակվում ա, բայց էլ զինամթերք չունենք:

- Տղե՛ս, հիմա ուղարկում ենք, դիմացե՛ք:

Բայց այդպես էլ զինամթերքը տեղ չհասավ: Մեքենան, որ զինամթերք էր տանում, ընկավ դիվերսիոն հետախուզական խմբերի դարանակալման մեջ: Մեքենայի մեջ գտնվողներին՝ մայոր Հայկ Թորոյանին ու վարորդ-մեխանիկ Հրանտ Ղարիբյանին դարանակալած թշնամին շրջապատել էր:

Տեսնելով, որ ռազմամթերքն ուշանում է, Մերուժանը որոշեց ոչ մի դեպքում դիրքը չհանձնել.

- Չնահանջե՛ք, չհանձնվե՛ք, կռվե՛ք մինչև վերջին փամփուշտը:

- Զվոդնի՛ (այդպես էին դիմում Մերուժանին զինվորները), պատրոնները վերջացան:

- Պատրաստվե՛ք ձեռնամարտի:

- Պատրա՛ստ ենք, - գոռացին տղերքը այնպիսի կատաղի ձայնով, որ թշնամին նրանց բարձրացրած աղաղակից մի պահ ցնցվեց:

Հայերը սկսեցին նոր թափով կռվել: Տղաները կռվում էին երգելով ու մեծ ուրախությամբ: Ասես զգում էին, որ վերջին անգամ է իրենց շուրթերից հնչելու արդեն հարազատ դարձած բանակի երգը:

Երկար մարտնչելուց հետո զոհվեցին դիպուկահար Աղասի

Ասատրյանը, գնդացրորդ Ռաֆիկ Հակոբյանը, շարքային Վիկտոր Յուզիխովիչը:

Հակառակորդը քառապատկեց իր զինվորների թիվը մարտի դաշտում: 170-րդ դիրքը բոլոր կողմերից շրջապատվեց: Նրանք քիչ-քիչ մտան խրամատի մեջ:

Հրայր Բաղդասարյանը խրամատը թեքվելիս դեմ դիմաց հանդիպում է հակառակորդի երեք զինվորի հետ: Նա մտնում է իր կողքի խրամատաբջջի մեջ, իսկ նրանք իրենց: Սկսում են կրակ բացել: Հրայրը հիշում է, որ նռնակ ունի. արագ նետում է թշնամու ուղղությամբ, վերջինս էլ՝ իր: Հայ զինվորի նետած նռնակն ընկավ այն խրամատաբջջի մեջ, որի մեջ թշնամին էր, իսկ նրանց նետածը՝ խրամատաբջջի դիմաց: Հրայրը արագ պառկեց և նռնակը ոտքով հրեց դեպի թշնամին: Պայթյունի հետևանքով նրա մի ոտքը կոտրվեց, իսկ մյուսը բեկորային վնասվածք ստացավ:

Տղան մոտ երեք-չորս մետր առաջ շարժվեց. նա ցանկանում էր գնալ գետնատնակ և նռնակ վերցնել, բայց հակառակորդը նորից սկսեց կրակելը: Գնդակներից մեկը կպավ Հրայրի թևին: Նա միայն ինչ-որ անորոշ տաքություն զգաց. չհասկացավ, որ վիրավոր է: Սկսեց առաջ շարժվել և նորից վիրավորվեց. գնդակը կպավ թիակին:

Մի քանի մետր էր մնացել, որ Հրայրը հասներ դասակի հրամանատար Մերուժան Ստեփանյանին, երբ վերջինս զոհվեց:

Հրայրը դժվարությամբ առաջ էր շարժվում, երբ նկատեց հայկական համազգեստով երկու հոգու: Նրանք օգնեցին վիրավոր զինվորին՝ հասցնելով ապահով տեղ, ապա տեղափոխեցին հոսպիտալ:

Ամենուրեք խառնաշփոթ էր: Հրամանատարներն օգնում էին վիրավորներին, հրամաններ էին արձակում, զինվորները կրակում էին, վազում դիրքով մեկ, բաց դաշտ դուրս գալիս, դիտարկումներ կատարում, բայց ոչ երբեք հուսահատվում: Արծվին՝ Արգիշտի Գաբոյանի հայրը, հետաքրքրությամբ դիտում էր, թե ինչպես է մեկը զինվորներին հրահանգում, որ դուրս գան ու շարվեն: Խրամատներից զինվորները դուրս էին գալիս. հայրը ճանաչեց որդուն

ու գնաց նրա ուղղությամբ: Արգիշտին պատահմամբ շրջվեց և տեսավ հորը, անակնկալի եկավ:

- Պա՛պ, ինչի՞ ես եկել:

- Մենակ չեմ եկել, մեր ստորաբաժանումով եմ եկել:

Հայր ու որդի գրկախառնվեցին, ապա բաժանվեցին: Արծվին երկար ժամանակ տատանվում էր՝ գնա՞մ, թե՞ մնար որդու մոտ: Ի վերջո որոշեց գնալ: Նա իր մարտիկների հետ գնաց Թալիշ գյուղի ուղղությամբ, իսկ Արգիշտին իր դասակը տարավ դեպի «Սիս» հենակետ: Մոտ երեսուն քայլ հեռանալուց հետո Արգիշտին շրջվեց, նայեց հորը, խորհրդավոր ժպտաց ու գնաց:

Գիշերը՝ մոտ ժամը երեքին, առաջին սնարյադն ընկնում է Թալիշ գյուղի վրա: Նրանք ունեին խումբ՝ «патруль», որը գյուղի վերևում էր և հսկում էր տարածքը: Խմբի հրամանատարը երեք զինվորի հետ, որոնցից մեկը վիրավոր էր, վազելով գալիս է և ասում.

- Երեխեքիս սպանեցին:

Փոխգնդապետ Արթուր Հակոբյանը, տեղեկանալով, որ հակառակորդի մեծաթիվ դիվերսիոն խմբեր կան գյուղի վերին հատվածում, հրամայում է կրտսեր սերժանտ Ռազմիկ Գասպարյանին բարձրանալ նշված տարածք: Ռազմիկն անգիտակցաբար զենքը վերցնում է և վազում այնտեղ, որտեղ թշնամին է: Նա վազում էր հնարավորինս արագ՝ գերմարդկային ճիգեր գործադրելով վայրկյան առաջ տեղ հասնել: Հետո հասկանում է, որ այնտեղ ոչ ոք չկա: Մի պահ կանգնելուց և իրավիճակն ըմբռնելուց հետո ընկերներից մեկն ասում է.

- Ռա՛զ, սարի հետևից ձայն ա գալիս:

Ռազմիկը, միանգամից վազելով, բարձրանում է այնտեղ. նրան բնավ չէր էլ հետաքրքրում, թե այնտեղ ով կա, հետաքրքիր էր լոկ այն զինվորը, որի մասին լսել էր ներքևում: Հասնելով բլրին՝ կրտսեր սերժանտ Գասպարյանը տեսնում է, որ մոտ յոթանասուն մարդ՝ մեկը պառկած, մյուսը նստած, երրորդը ծխելիս, հայկական համազգեստով, այդտեղ են: Նա, կարծելով թե հայերն են, ձայն է տալիս.

- Տղերք, մեր երեխեքին չեք տեսել:

- Արի՛, արի՛, ախպեր, - պատասխանում է ներքևից մեկը:

Ռազմիկը մտածեց, որ զինվորներն այդտեղ են և վազելով մի քանի քայլ գնաց նրանց ուղղությամբ: Այդ ժամանակ ձախ կողմից գոռացին.

- Մի՛ գնա, էդտեղ թշնամին ա:

Ձայն տվողները հենց իր փնտրած զինվորներն էին: Ռազմիկը մի պահ կանգնեց, հետո վազեց, իսկ թշնամին նրա հետևից սկսեց կրակ բացել: Նա անցավ բլուրն ու գնաց դեպի այն զինվորների կողմը, որոնք ձայնում էին.

- Ռա՛զ, արի՛, արի՛, ստեղ ենք:

Զինվորներին հասնելուն պես տեսավ, որ նրանք պառկած են ճանապարհին կից մի հողաթմբի հետևում. տղաներից մեկը վիրավոր էր և բավականին արյուն էր կորցրել: Զինվորները գնացել էին դեպի այդ հողաթումբը նրա համար, քանի որ այն պահում էր ճանապարհը գյուղ մտնելուց: Նրանք թաքնվել էին այդտեղ՝ ցանկանալով ամեն կերպ թույլ չտալ թշնամուն մոտենալ գյուղին:

- Անունդ ի՞նչ ա:

- Ռազմի՛կ:

- Ռազմիկներն ուժեղ են, քեզ ուժե՛ղ պահիր:

Կրտսեր սերժանտ Գասպարյանը ոգեշնչում էր զինվորին և տեսնում, թե ինչպե՞ս է նրա վիճակը գնալով բարելավվում: Ռազմիկը տեսավ, թե ինչպես է թշնամին ամբողջ հասակով կանգնել բլրի վրա և կրակում: Հակառակորդի նման վարմունքը զայրացրեց հերոսին: Նա սկսեց ծնկած դիրքից կրակ բացել ու առաջին իսկ կրակոցով մեկին գետին տապալել: Մյուսները, այս տեսնելով, պառկեցին, և կրակը սկսեց մի քիչ դադարել: Ռազմիկը ճիշտ գնահատեց իրավիճակն ու վիրավոր զինվորին ասաց.

- Պետք ա էսքան տեղը վազենք:

- Չէ՛, չէ՛, կկրակեն, դրանք ...:

- Ոչինչ, արի՛, դու իմ աջ կողմով վազի, որ ձախ կողմից կրակեն, թող ինձ կպնի: Քեզ չի կպնելու:

Ի վերջո, Ռազմիկին հաջողվեց համոզել զինվորին և նրա ձեռքից պինդ բռնեց, որ նույնիսկ, եթե ընկնի, ինքը կարողանա նրան տանել: Կրտսեր սերժանտ Գասպարյանը քաջ գիտակցում էր, որ տվյալ պահին զինվորը ոչինչ չի ընկալում, նա չի գիտակցում, որ լոկ սա է իր փրկությունը. մոտ հինգ մետր վազելուց հետո թշնամու տեսադաշտից դուրս է գալու, իրեն բժշկական օգնություն են ցույց տալու: Երբ նրանք վազում էին, հակառակորդի արձակած փամփուշտներից մեկն ընկավ զինվորի ոտքերի դիմաց, և վերջինս ընկավ գետին: Ռազմիկն ամբողջ ուժով սեղմեց զինվորի ձեռքն ու քաշելով հեռացրեց վտանգավոր տարածքից: Ապա Ռազմիկն ասաց.

- Դու էստեղ սպասի, ես հիմա կգամ:

Ռազմիկը, վերցնելով զենքն ու չորս պահեստատուփ փամփուշտ, բարձրանում է հարմար դիրք, որը ծածկված էր թփերով, և, ամենայն հավանականությամբ, իրեն չպետք է նկատեին: Սկսում է կրակ բացել, որն էլ խուճապահար է անում հակառակորդին: Նա կրակեց մինչև վերջին փամփուշտը, ապա հիշեց, որ իր մարտաբաճկոնի գրպանում միշտ երեք փամփուշտ էր պահում: Փամփուշտները դրեց պահեստատուփի մեջ, լիցքավորեց և որոշել էր արդեն, որ պետք է հետ գնա, տեսավ, թե ինչպես է թշնամու զինվորներից մեկը, թփերի հետևից ժպտալով, նայում իրեն: Սակայն շնորհիվ հայ խիզախ մարտիկի՝ ժպիտը հավիտյան սառեց նրա դեմքին: Այնուհետև հետ եկավ, վիրավոր զինվորին շալակած տարավ ու հասցրեց բժիշկներին:

Ապա իջնելուց հետո հաշվում են ու տեսնում, որ զինվորներից մեկը չկա: Փոխգնդապետ Արթուր Հակոբյանը հրամայում է, որ գնան ու գտնեն զինվորին: Մի քանի հոգով նորից բարձրանում են, սակայն իրավիճակն այնպիսին էր, որ անկարելի էր որևէ մեկին փնտրել. որտեղ հայտնվում էին, տվյալ տարածքը հրետակոծվում էր: Մյուս խումբը զանգում և տեղեկացնում է, որ «Խաչի սար» կոչվող հատվածում մարդ կա: Փոխգնդապետ Հակոբյանից հրաման են ստանում, որ գնան այդ սարի վրա և պարզեն, թե ովքեր են, քանի որ հնարավոր է՝ լինեն գյուղացիներից: Ռազմիկն ու մայոր Մովսիսյանը ճանապարհ ընկան, որտեղ էլ սկսեցին իրենց վրա կրակելը:

Ամեն ինչ պարզ է. սարի վրա հակառակորդն էր: Սարը բարձրանալիս զանգ են ստանում փոխգնդապետ Արթուր Հակոբյանից.

- Առաջնագծի ամբողջ երկայնքով հակառակորդը հարձակվում է տանկերով:

Նրանք բարձրացան սարը, որտեղ մոտ երեսուն մարդ կար, սակայն հակառակորդը մինչև ատամները զինված էր: Տղաները թշնամուն վտարեցին սարից, որոնք իջան ձոր, այնտեղից էլ մտան անտառ: Այդ ժամանակ նրանց միացան նաև մայոր Մանուչարյանն ու կապիտան Գևորգյանը և չորս հոգով բաց դաշտում վազեցին թշնամու ուղղությամբ: Այս ամենը սարսափեցրեց հակառակորդին և հրետանին կանչեցին իրենց դիմաց: Որոշ ժամանակ պայքարելուց հետո մայոր Մովսիսյանը ծնկից վիրավորվեց, և նրանք ձորում սպասեցին, որ հանկարծ թշնամին գյուղ չմտնի, մինչև օգնության եկավ փոխգնդապետ Արտյոմ Գևորգյանի խումբը: Նրանց տեսնելով՝ տղաները նորից ցանկացան մարտի նետվել, սակայն արդեն ուժասպառ էին. տասներկու ժամ էր, ինչ մարտնչում էին: Ի վերջո տղաները վիրավոր կապիտան Թորոսյանին իջեցրին: Գնդապետ Գաբրիելյանն արդեն եկել էր, որի հրամանով էլ Ռազմիկը մնաց այդտեղ:

Փոխգնդապետ Արտյոմ Գևորգյանը խնդիր է ստանում.

- Խմբերը վերցրու՛ և շտապի՛ր Թալիշի ուղղությամբ:

Փոխգնդապետ Արտյոմը և իր խմբերն անցան խնդրի կատարմանը: Մադաղիսի մոտ հուժկու հրետակոծություն էր, որից մեքենաները վնասվում էին: Տղաները և՛ կրակում էին, և՛ առաջ շարժվում: Ի վերջո նրանք հասան Թալիշ:

Գնդապետ Ռոման Գաբրիելյանն Արտյոմին տեղեկացնում է, որ վերցրված է 170-րդ մարտական դիրքը. գնա՛ և փորձի՛ր այն հետ վերցնել: Արագ մշակվում է օպերացիա, և նրանք մեկնում են այն կատարելու:

Ճանապարհին նրանց առջև բացվեց սարսափելի մի տեսարան. զինամթերքով բեռնված մեքենան կանգնած էր ճանապարհին, կողքին մահացած հրամանատարները՝ մայոր Հայկ Թորոյանը և մեխանիկ - վարորդ Հրանտ Ղարիբյանը: Այս ամենը ցնցեց

Շահբազյան
Աշոտ Կարապետի

Անդրեասյան
Արման Սեյրանի

Սարգսյան
Նորիկ Զավենի

Սիմոնյան
Ազատ Քաջիկի



Գևորգյան
Արթուր Գառնիկի

Հարությունյան
Գրիգոր Գևորգի



Սահակյան
Ադամ Խաչատուրի



Ներսիսյան
Կարեն Արտակի



Գալստյան
Սաշա Վահագանի

Ալեքսանյան
Բագրատ Արթուրի

Եսայան
Ժորա Արթուրի



Օզմանյան
Բորիս Ռաֆիկի



Բերակչյան
Տիգրան Էդուարդի

Գրիգորյան
Անդրանիկ Մարատի

Առաքելյան
Ալեքսան Գևորգի

Պողոսյան
Ռոման Վլադիմիրի

Գրիգորյան
Օնիկ Կարոյի

Մելքումյան
Սուրեն Գրիշայի

Գրիգորյան
Մաքսիմ Վագիֆի

Ուրֆանյան
Արմենակ Մերսի



Սլոյան
Քյարամ Քալաշի

Աբաջյան
Ռոբերտ Ալեքսանդրի

Զոհրաբյան
Անդրանիկ Ատոմի

Կիրակոսյան
Հովսեփ Գեղամի



Փարամազյան
Յուրի Անատոլիի

Մարգարյան
Նոդարիկ Արտաշի

Ղարիբյան
Հրանտ Սամվելի

Թորոյան
Հայկ Վահանի

Ստեփանյան
Մերուժան Արթուրի

Յուզիխովիչ
Վիկտոր Ալեքսանդրի



Հակոբյան
Ռաֆիկ Խլղաթի

Ասատրյան
Աղասի Սարմենի

Գրիգորյան
Հայկ Ռոդիկի



Գասպարյան
Նորիկ Ժորայի



Զաքարյան
Վահե Սամվելի

Գալստյան
Հրաչյա Վարդանի

Վարդանան
Գևորգ Գագիկի

Իսկանդարյան
Ռուբեն Աշոտի

Մկրտչյան
Սասուն Ֆահրադի

Մկրտչյան
Գեղամ Ռաշիդի

Սահակյան
Սարգիս Արմենակի

Թովմասյան
Մասիս Միքայելի

Եղոյան
Բենիամին Ներսեսի

Աբգարյան
Տիգրան Արամի



Ալիխանյան
Վլադիմիր Վարուժանի



Աբրահամյան
Արամ Արայիկի

Թադևոսյան
Վարդան Սուրիկի



Աբրահամյան
Հարություն Հովհաննեսի

Սարգսյան
Վրեժ Վարդանի



Միքայելյան
Արամայիս Գրիգորի

Ղահրամանյան
Հենրիկ Ռուդոլֆի

Մելքոնյան
Գագիկ Սուրիկի



Գաբոյան
Արգիշտի Արծվիի

Մկրտչյան
Նարեկ Վարդանի

Աղաջանյան
Միշա Կամոյի

Մովսեսյան
Ռուդիկ Բախշիի



Գասպարյան
Դավիթ Յուրիի



Պետրոսյան
Արտակ Այգավարդի

Հայրապետյան
Դավիթ Ռազմիկի

Ալեքսանյան
Էդուարդ Յուրիկի

Ասրյան
Սեդրակ Սերգեյի

Բեգլարյան
Արմեն Մինասի

Դանոյան
Սերգեյ Գուրգենի



Սարգսյան
Դավիթ Բագրատի

Հովհաննիսյան
Արմեն Արեգի

Միրզոյան
Մայիս Երջանիկի

Նիկալյան
Եղիշ Արտավազդի

Համբարձումյան
Կարո



Փարսադանյան
Գագիկ Կոլյայի

Խալաֆյան
Սարգիս Լազրի

Հաջյան
Նորայր Միքայելի

Սիմոնյան
Նվեր Սարոյի

Մայիլյան
Հովսեփ Ռաֆայելի

Բալայան
Ազնաուր Ռաֆիկի

Սահակյան
Ղարիբ Հայասերի



Նարինյան
Վլադիկ Ստեփանի

Կիրակոսյան
Գոռ Կարապետի

Գասպարյան
Արմեն Կառլենի

Հոսեփյան
Նիկոլայ Սարգսի

Առուշանյան
Արամ

Աբրահամյան
Ռոբերտ

Մովսիսյան
Գարիկ

տղաներին, բայց միևնույն է, պետք է կատարեին առաջադրանքը:

Կրակի հուժկու տարափի տակ նրանք հասան հրամանատարական դիտակետ՝ ՀԴԿ. փոխգնդապետ Գևորգյանը խնդիր դրեց.

- Կենտրոնացեք ՀԴԿ-ում, դիրքավորվեք, ուսումնասիրեք հենակետը և կրակ բացեք հակառակորդի ուղղությամբ:

Մութն ընկնելուն պես Արտյոմին է միանում ևս մեկ խումբ: Փոխգնդապետ Գևորգյանը անձնակազմը բաժանում է երկու մասի: Առաջին խումբը մայոր Բորդուրյանի գլխավորությամբ պետք է մոտենար հենակետին աջ կողմից և կրակը վերցներ իր վրա, իսկ Արտյոմի գլխավորած խմբերը, շրջանցելով հենակետը ձախ կողմից, մոտեցան թիկունքից: Փոխգնդապետ Գևորգյանը դիրքավորում է անձնակազմը, և նրանք անցնում են խնդրի կատարմանը:

Արտյոմի անձնակազմի տղաներից մեկը կրակ է բացում կացարանի ուղղությամբ, փոքր-ինչ բարձր է պահում՝ մտածելով, որ սնարյադը կացարանի դռնից ներս մտցնի, բայց սնարյադն անցնում է չեզոք գոտի, ընկնում անտառի մեջ և հրդեհվում: Շրջապատի լուսավորվելուց հետո 172-րդ դիրքում գտնվող կապիտան Հովհաննես Պողոսյանի դիտարկումների արդյունքում պարզվում է, որ անտառում կուտակված հակառակորդի մեծաքանակ զինված ուժեր գալիս են դիրքերից մեկի ուղղությամբ: Կապիտան Պողոսյանը կապվում է գնդապետ Ռոման Գաբրիելյանի հետ, որի հրամանատարության ներքո կատարվում էին բոլոր գործողությունները, և ներկայացնում իրավիճակը: Գնդապետ Գաբրիելյանը կապվում է մոտակայքում գտնվող դիվիզիայի հրետանու պետին և հրամայում, որ կապիտան Պողոսյանի՝ նշանակետերը տալուց հետո տվյալ տարածքը հրետակոծեն:

Նրանց կրակելուց հետո տղաները փորձ արեցին գրոհելու, սակայն հակառակորդի գերակշռող քանակի և բարենպաստ դիրքի պատճառով հենակետը գրոհել չստացվեց: Նրանք դիրքավորվեցին ու սկսեցին կրակ բացել թշնամու ուղղությամբ: Տեսնելով, որ զինամթերքն արդեն սպառվում է և վիրավոր կա, փոխգնդապետ Գևորգյանը հրամայում է.

- Նահանջեք ՀԴԿ:

Հրամանն իսկույն կատարվում է: Ապա հրամանատարից օգնություն են խնդրում, վերալիցքավորում զենքերը (ժամանակ է տրվում անձնակազմին հանգստանալու համար), իսկ իրավիճակը վերստին ճշտելու համար առաջ է շարժվում հայ հրետանավորների մի ստվար հատված:

Հարություն Բաղալյանը դիտորդ էր, երբ նկատեց թշնամու կուտակումը: Անմիջապես իջնում և զեկուցում է դիրքի ավագին, ապա անցնում շրջանաձև պաշտպանության: Թշնամին ներխուժում է դիրքեր: Սկսվեց կռիվը հրացաններով, նռնակներով: Հարութի ուղղությամբ նռնակ նետեցին: Զինվորը ցավից ընկավ գետին. ոտքը վիրավոր էր: Հանկարծ նկատեց, որ երկու հոգի մոտենում են իրենց կացարանին: Կաղալով նա վազեց այդ ուղղությամբ: Պաշտպանիչ պատից դուրս գալուն պես երկու մետր հեռավորության վրա դեմ դիմաց հանդիպեց թշնամուն: Նրանցից առաջինը զենքը պահեց Հարութի վրա, վերջինս էլ՝ նրա: Իրավիճակն այսպիսին էր՝ ով առաջինը կկրակեր, նա էր փրկվողը: Հարութին հաջողվեց կրակել և սպանել թշնամուն: Մյուսն էլ տեսնելով, որ ընկերն այլևս չկա, փախավ: Բայց անկոտրում է հայ զինվորը: Հարութը՝ ոտքից վիրավոր, մոտ տասը մետր վազեց փախչող թշնամու հետևից և նրան էլ ոչնչացրեց: Հակառակորդը, տեսնելով Հարութի յուրօրինակ ըմբոստ դիմադրությունը, հետ նահանջեց: Այդ ժամանակ նա դիրքի ավագից վերցրած երեք - չորս նռնակը նետեց մազապուրծ եղած հակառակորդի կողմը: Լսվեցին նրանց գոռգոռոցները. հրամանատարն էր վիրավորվել: Ապա իր զենքը գցեց և վերցնելով թշնամունը՝ վազեց նրանց հետևից: Սակայն ճանապարհին աստիճաններ կային, որոնք էլ խանգարեցին վիրավոր զինվորին առաջ շարժվել: Հարութն ընկավ գետին, բայց կարողացավ այնպես դիրքավորվել, որ և՛ տեսնում էր թշնամուն, և՛ կրակում: Մի քանի րոպե այսպես մարտնչուց հետո հակառակորդը թողեց իր հրամանատարին ու էլի հետ նահանջեց:

Սերժանտ Ռաֆայել Հովհաննիսյանը ՀԴԿ-ում էր, երբ նկատեց, որ տանկեր են գալիս իրենց ուղղությամբ: Հակառակորդի գյուղից մոտ ինը տանկ դուրս էր եկել, որոնցից յոթն արդեն

հասել էին մեր դիրքեր: Կապվում է զորամասի հրամանատարի հետ և համապատասխան հրաման ստանալուց հետո ֆագոտով կրակում: Սերժանտ Հովհաննիսյանի առաջին հարվածից խոցվեց թշնամու տանկը, այնուհետև նա խոցեց երկու տանկ ևս: Ռաֆայելի այս հերոսական քայլը ոգևորեց տղաներին:

Առավոտյան Թալիշի կողմից մեքենաները շարունակ իջնում էին, որն էլ մի քիչ տարօրինակ թվաց զինվորներին: Շուլին կատակով տղաներին ասաց.

- Տղե՛րք, վեր կացի ժամ է, արթնացե՛ք:

Նույն վայրկյանին առաջին արկն ընկավ: Տղաները նետվեցին խրամատի մեջ, որին հաջորդեց ինտենսիվ հրետակոծությունը: Գնդակոծում էին D-30, D-20 ծանր հրետանային հաուբիցներից, «Գրադ» հրթիռահրետանային կայանքից: Կարճ ժամանակ սպասելուց հետո, երբ հասկացան, որ իրավիճակը չի փոխվում, դուրս եկան խրամատներից: Խնդիր ստացան.

- Բարձրացե՛ք Թալիշի ուղղությամբ:

Տղաները շարժվեցին ...:

Նմանատիպ արագընթաց հրետակոծության ժամանակ չափազանց դժվար էր բարձրանալը, բայց տղերքին հաջողվեց հասնել Թալիշ: Սարերի վրա նրանք ֆագոտներով զբաղեցրին իրենց բնագծերը և սկսեցին դիտարկումներ կատարել: Բայց դժվար էր այդպես դիրքավորված մնալը. հրետանային կրակները իրենց վրա էին տեղում: Մարտկոցի հրամանատարի ցուցումով հաճախակի տեղափոխվում էին՝ միմյանց հետ կապը պահելով:

Պաշտպանության բանակի «Եղնիկներ» կոչվող զորամասի դիրքերում իր սխրանքն էր հյուսում Գևորգ Մանուկյանը: Նա նկատում է թշնամու ՄԻ-8 ուղղաթիռը, որը դեսանտային ուժեր էր մոտեցնում հայկական տարածքներին: Երիտասարդը մի քանի վայրկյանում լիցքավորում է զենքը և մոտ երեք կիլոմետր հեռավորությունից «Իգլա» համալիրից հրթիռ է արձակում, որն էլ խոցում է թշնամու ուղղաթիռը:

Մատաղիսում ևս թշնամին սկսեց լայնածավալ հարձակումը: Մռայլ գիշերը վայրկենապես լուսավորվեց թշնամու հրթիռա-

կոծությունից: Արկերից մեկն ընկավ զորամասի մոտ՝ վնասելով պատը: Տրվեց տագնապի ազդանշան: Ճանապարհին, երբ նրանք դիրքեր էին բարձրանում, գրադի արկերից մեկն ընկավ Յուրի Փարամազյանին և իր երկու ընկերներին շատ մոտ: Յուրին նետվեց նրանց ուղղությամբ, մարմնով ծածկեց զինվորներին:

Վլադիմիր Նարինյանը հերոսաբար մարտնչում էր: Նրանց հաջողվեց հետ շպրտել թշնամու առաջին հարձակումը: Նրա համար չափազանց սոսկալի հարված էր ընկերոջ՝ Յուրիի զոհվելը: Հակառակորդը ահռելի քանակությամբ հրետանի էր կիրառում: Վլադիմիրի ձախ կողմում արդեն տանկեր էին կուտակվել: Նա անընդհատ կապ էր տալիս և ասում.

- Պարոն կապիտան, հանգիստ եղեք, ստեղ լրիվ նորմալ ա: Մատաղիսի ուղղությունը, իմացեք, պաշտպանված ա:

Կապիտան Հովսեփը, տեսնելով գնդակների տարափը, հրամայում է.

- Արգելում եմ դուրս գալ խրամատից: Մնացեք խրամատում և այնտեղից կրակ բացեք: Ես դուրս եմ գալիս մարտադաշտ:

- Պարոն կապիտան, մենակ վտանգավոր ա, ես էլ գամ:

- Ո՛չ:

Ապա մենակ նետվում է մարտադաշտ: Հակառակորդի հետ կռվի ժամանակ Հովսեփը ծանր վիրավորվեց: Այդպես վիրավոր, արնաշաղախ՝ նա վազելով գնում է և նռնակով պայթեցնում թշնամու զինվորների դիտակետը: Զինվորները խրամատից տեսան, թե ինչպես է աչքերն ու ականջները ամբողջովին արյան մեջ կորած՝ առաջ ընթանում, որ հակառակորդը չմոտենա զինվորներին, իսկ ինքն էլ գերի չընկնի:

- Տղերք, կամանդիրի վիճակը լավ չի:

- Կամադիրին պիտի ամեն կերպ խրամատ բերենք:

Զինվորները մեծ դժվարությամբ նրան խրամատ տարան, սակայն նրանց գլխին գնդակների տարափ էր տեղում, որի համար էլ կապիտանին այդ տարածքից հանել չկարողացան: Այդ ժամանակ արնահոսող Հովսեփը հրամայում է.

- Տղերք, ես լավ եմ, դուք կռվեք:

Զինվորներին պետք էր հաց տանել. նրանք քաղցած էին և ուժահատ: Նոդարիկը առաջադրանք ստացավ՝ հաց բարձրացնելու դիքեր: Ճանապարհին, երբ ջանում էր վայրկյան առաջ դիրքեր հասցնել հացով բեռնված մեքենան, թշնամին արկ է նետում. այն ընկնում է հենց նրա վարած մեքենայի կողքին: Նոդարիկը մահացավ: Որոշ ժամանակ անց մահացավ նաև Հովսեփը՝ արնաքամ լինելով: Անչափ սիրելի կապիտանի մահը մեծ ցավ էր զինվորների համար: Նրանք չէին կարող մոռանալ, թե ինչպես իրենց թողեց խրամատում և մեն-մենակ կռվի նետվեց: Սա այնպիսի մեծ սեր էր դեպի զինվորը, որը վայել է միայն հայ սպային: Նրանք պատրաստ են թեկուզ կյանքի գնով փրկել իրենց զինվորներին: Հայրենասիրության և անձնազոհության վառ օրինակն է կապիտան Հովսեփ Կիրակոսյանը: Հավերժ փառք:

Լուսացավ սարսափելի և մղձավանջային գիշերը: Արևի առաջին ճառագայթների դուրս գալուն պես երևացին թշնամու՝ գիշերով կատարած բարբարոսությունների հետքերը: Ա՛խ, ինչո՛ւ, ինչո՛ւ չսիրեց ապրիլ ամիսը հայ ժողովրդին: Դաժան էր տեսարանը, մահու չափ սարսափելի: Խրամատները լցվել էին դիակներով: Նոր բուսած թարմ կանաչ խոտն արդեն ներկվել էր արյունով:

Սահմանից այն կողմ արևագալին երեխաները դպրոց էին շտապում, երբ նորից սկսեց հրթիռակոծությունը: Գրադի արկերից մեկը դիպավ գյուղի երեխաներից մեկին՝ Վաղինակին: Նա իր երկու ընկերների հետ դպրոց էր գնում, և չնկատեցին էլ, թե ինչպես մի բան տրաքեց, ու նրանք ընկան: Վաղինակը, որ ընդամենը տասներկու տարեկան էր, լի երազանքներով և կյանքի նկատմամբ մեծ հավատով, մահացավ, իսկ նրա երկու ընկերները վիրավորվեցին: Այս ամենն արդեն անտանելի էր դառնում, և հայկական զորքերն անցան լայնածավալ հակագրոհի: Նրանք ցույց տվեցին թշնամուն, որ հայ մարտիկը քաջ է ու անկոտրում և երբեք չի հանդուրժի իր նկատմամբ որևէ ստորություն: Հենց նույն օրը՝ առավոտյան, հյուսիսարևելյան ուղղությամբ թշնամու ուղղաթիռ է հայտնվում: Դիրքերից մեկի ավագը՝ սերժանտ Պարույր Գալստյանը, նկատում է այն և դիրքավորում իր

ութհոգանոց անձնակազմին: Նրանք սկսում են կրակ բացել: Սերժանտ Գալստյանը և կրակում էր, և ոգեշնչում տղաներին: Հայ զինվոր Նարեկը խոցեց թշնամու ուղղաթիռը՝ նրան ցույց տալով հայ մարտիկի բազկի ուժն ու հնարամտությունը: Նարեկն այդժամ բլինդաժում՝ գետնատնակում էր, հանգստի ժամ էր: Երբ թշնամին գրանատամյոտով գալիս է, որ խոցի բլինդաժն ու անձնակազմին, այդ ժամանակ Նարեկը հասարակ նռնակով խոցում է թշնամու ուղղաթիռը: Այն, կորցնելով կառավարումը, կործանվում է: Այս լուրը վայրկենապես տարածվեց հայկական բանակում: Տղաների սառած դեմքին մի աննկատ ժպիտ սահեց, որն իսկույն չքացավ: Նարեկի այդ հերոսական քայլը նոր ուժ հաղորդեց հայ զինվորին: Նրանք նոր թափով սկսեցին հակահարված տալ թշնամուն:

* * *

Սահմանից այն կողմ խառնաշփոթ էր: Արցախի պաշտպանական բանակն արդեն հայտարարել էր գիշերը տեղի ունեցած դեպքերի մասին և հավելել, որ առաջնագծի հարավային ուղղությամբ կրկին մարտեր են ընթանում: Թշնամին շարունակում էր կիրառել հրթիռահրետանային միջոցներ և զրահատեխնիկա: Ինչ- որ կախարդական ձայն գուժում էր.

- Պատերազմ է, կռիվ:

Լուրը կայծակի պես տարածվել էր ողջ երկրում: Ամենուրեք մարդկանց հոծ խմբեր էին երևում:

Ապրիլի երեքի առավոտյան հարյուրավոր կամավորներ էին հավաքվել Ստեփանակերտում՝ առաջնագիծ մեկնելու համար: Նրանց թիվը գնալով բազմապատկվում էր: Երեկոյան կամավորներին միացան նաև Սյունիքից եկած ազատամարտիկները: Կամավորները ցանկանում էին վաղ հասնել առաջնագիծ, սատար կանգնել հայ զինվորներին:

- Ինչի՞ համար եք գնում:

- Մեր հայ զինվորի համար: Մեր Ղարաբաղի: Մեր հողերը պահելու համար:

Կամավորներին էին միացել նաև կանայք, ծերունիներ, հոգևորականներ: Բոլորը, բռունցք դարձած, պատրաստվում էին մեկնել սահման, թույլ չտալու, որ էլի զինվորի արյուն թափվի: Օդը նույնիսկ վրեժ էր ներշնչում: Կամավորների մեջ կային նաև այնպիսի մարդիկ, որոնք ծանր հիվանդ էին: Նրանք այսպես էին մեկնաբանում իրենց գնալը.

- Թեպետև չեմ կարող կռվել թշնամու դեմ, բայց կարող եմ հակառակորդի գնդակն ինձ վրա կրելով՝ մի երիտասարդի կյանք փրկել:

Հայ կինը, մոռացած իր ամոթխածությունը, շտապում էր սահման հասնել: Նա ոչ միայն սպեղանի կդներ վիրավորների վերքերին, այլև, եթե հարկ լիներ, կմարտնչեր: Սոսե՛ Մայրիկ:

Այս ամենն արդեն խելագարության էր հասցնում: Ինքնաթիռներով շարունակ հայրենիք էին վերադառնում պանդխտության մեջ եղած հայերը: Պատերազմի լուրը միավորեց ողջ ազգին:

Ազատամարտիկները գնում էին իրենց փորձը կիսելու հայ զինվորի հետ: Կապ չուներ, թե ավտոբուսը նրանց ուր կտաներ. նպատակը մեկն էր՝ շուտափույթ օգնության հասնել զինվորին:

- Տիգրա՛ն, դու դիմում գրի՛ ու գնա՛ Թալիշ. քո տղեն Թալիշում ա:

- Արտա՛կ, ինչ կապ ունի՝ ու՞մ տղեն, որտեղ ա: Բոլորն էլ մեր տղերքն են՝ իմ ու քո չկա: Ա՛յ, նայի էն կնոջը, որ անհանգիստ քայլում ա աջ ու ձախ, նոր հարցրի.

- Քույրի՛կ, դու ինչո՞ւ ես գնում: Երեխա, թոռ, ընտանիք չունե՞ս: Մենք գնում ենք հերիք ա, դու հե՛տ գնա ու աղոթի՛:

Նա ինձ վիրավորված պատասխանեց.

- Երեխա էլ ունեմ, թոռ էլ, ընտանիք էլ, բայց ամենամեծ ընտանիքս վտանգի մեջ ա, սիրելի երեխեքս ու թոռներս, սահմանին կանգնած, կռվում են. ասա՛, ես ո՞նց ընտանիքիս կողքին չլինեմ:

- Ես ամոթից կարկամեցի ու առանց մի բառ ասելու հետ եկա: Հիմա հասկանում ես, որ եթե կինը, որ, որպես կանոն, թույլ ա տղամարդուց, կարողացել ա մի կողմ թողնի իր զգացմունքները, ընտանիքն ու ժողովրդին համարի մեծ ընտանիք, իսկ զինվորներին՝ թոռ ու երեխա, ես էլ ո՞նց մտածեմ իմ տղայի մասին:

Իննսունականներին, երբ նորից առաջնագիծ գնացի, ընկերներիցս շատերը զոհվեցին: Նրանք էլ երեխաներ ունեին: Այ՛, իմ տղան էդ ժամանակ դեռ նույնիսկ ծնված էլ չէր: Ամեն անգամ, երբ հարցնում էի, թե արդյոք չե՞ն կարոտել իրենց երեխաներին, նրանք ոչինչ չէին պատասխանում. միայն լռում էին ու արցունքները զսպում: Այսօր նրանց որդիներն են կանգնած սահմանին, այսօր հենց նրանց տղաների շնորհիվ ա, որ թշնամին մեզ չի հասել: Ո՞նց մտածեմ միայն իմ որդու մասին: Վստահ եմ, որ, եթե ընկերներս ողջ լինեին, հաստատ նրանք էլ տարբերություն չէին դնի զինվորների մեջ: Չէ՞ որ զինվորը բոլորինս ա, չէ՞ որ նա համայն հայության որդին ու պաշտպանն ա:

- Տիգրան, մենք մանկության ընկերներ ենք, միասին դպրոց ենք գնացել, ծառայել, կողք կողքի էլ ապրել, բայց ես երբեք քեզ այսքան խոսելիս չէի տեսել: Դու միշտ շատ քիչ ես խոսել:

- Արտակ, էն Հակոբը չի՞:

- Հա՛, ինքն ա: Արի՛ գնանք:

- Հակո՛բ, ո՞նց ես:

- Լավ եմ: Առաջինը ո՞ր ավտոբուսն ա շարժվում:

- Կարմիրը:

- Գալիս ե՞ք գնանք, թե՞ ինչ-որ մեկին եք սպասում:

- Չէ, գալիս ենք:

Նրանք բարձրացան, ավտոբուսի մեջ եղած մարդկանց բարևեցին, արդեն ուզում էին նստել, երբ դրսից կանացի մի ճիչ լսեցին: Պայուսակները արագ դրեցին ու ցած իջան:

- Ինչ է եղել, այդ ո՞վ է:

- Մի երիտասարդ աղջիկ, հազիվ տասնութ տարեկան լինի: Ուզում է միանալ մեզ: Ասում է՝ ընկերը սահմանին է:

- Գնա՞նք, խոսե՞նք նրա հետ:

Ժողովրդին ճեղքելով երեք ընկերները հասան աղջկան: Նրանք, մի պահ սարսափած, կանգ առան և ոչինչ ասել չկարողացան: Մի աղջիկ՝ սև աչքերով, սևահեր, միջահասակ, գունատ, խառնված մազերով, լաց էր լինում ու գոռում.

- Ինձ էլ տարեք:

Հակոբն իսկույն ճանաչեց աղջկան. իր որդու՝ Էդգարի ապագա հարսնացուն էր: «Խեղճ աղջիկ», - մտածեց Հակոբը մտքում ու նետվեց դեպի ամբողջ մարմնով դողացող աղջիկը:

- Նարե՛, աղջի՛կս, ես եմ՝ Էդգարի հայրը:

Նարեն մի պահ նայեց Հակոբին, դադարեց լաց լինել, բայց ասես տեսածին չհավատալով՝ ընկավ գետին ու սկսեց հեծկլտալ:

- Նարե՛, ես գնում եմ, դու հանգիստ եղի՛ր. Էդգարին ոչինչ չի պատահի: Դու տուն գնա՛ ու սպասի՛ր, նա քեզ անպայման կզանգի:

- Իսկ եթե նա...

- Եթե չկա՛: Ես քիչ առաջ եմ խոսել նրա հետ: Տղաս լավ էր, նույնիսկ կատակում էր ու քեզանից հարցնում:

- Այո՛, - ուրախ բացականչեց Նարեն:

- Իհարկե՛, նա նաև ասաց, որ դու քեզ լավ նայես, իսկ ինքը քեզ ավելի ուշ կզանգի: Դե վե՛ր կաց, գնա՛ տուն և սպասի՛ր նրան:

Աղջիկը վեր կացավ, սրբեց աչքերի արցունքները ու ժպիտով բարի ճանապարհ մաղթելով Հակոբին՝ հեռացավ:

- Հակո՛բ, իրոք խոսե՞լ ես Էդգարի հետ: Քիչ առաջ էնքան տխուր էիր, որ նույնիսկ չուզեցա հարցնեմ:

- Ես Նարեին խաբեցի: Ինչպե՞ս կարող էի խեղճ աղջկան ասել, որ նրանից ոչ մի լուր չկա: Աղջիկն առանց այդ էլ սարսափելի վիճակում էր: Ես պետք է խաբեի նրան: Էդգարս հաստատ չէր ուզի, որ իր սիրած աղջիկը տխրեր:

- Հա՛, ճիշտ ես արել: Թող գնա տուն: Իսկ եթե Էդգարը էսօր չկարողանա՞ զանգել: Դու պատկերացնո՞ւմ ես, թե ինչ կլինի Նարեի հետ: Խե՞ղճ աղջիկ...

- Աստված մի Էդգարիս խլեց, երկրորդին չի խլի: Իսկ եթե տղաս ողջ լինի, այնպայման նրա հետ կապ հաստատելու մի միջոց կգտնի:

- Աստված ձայնդ լսի:

- Ազատամարտիկնե՞ր, կարմիր ավտոբուսը շարժվո՞ւմ է, ազա-

տամարտիկներ, - լսվեց վարորդի խռպոտ ազդանշանը:

- Գնա՛նք, մեր ավտոբուսն արդեն շարժվում է:

Երեք մարտական ընկերներ տեղավորվեցին ավտոբուսի մեջ ու ճանապարհ ընկան:

Եղանակը անբարենպաստ էր՝ անձրև, ծանր մառախուղ, ցեխ ու քամի: Այս դեպքում նույնիսկ թշնամին չէր դադարեցնում ուժգին կրակը:

Էդգարը խրամտում էր՝ հոգնած ու անասելի տխուր: Կինոժապավենի նման անցյալ օրվա դեպքերը անընդհատ երևում էին աչքին: Ճակատից սառը քրտինք էր կաթում, բայց նա այդ ամենն ասես չէր զգում: Անհավատալի էր թվում եղածը. ընդամենը երկու օր առաջ ամեն բան հիանալի էր: Շատ էր կարոտել ծառայակից ընկերներին: Հիշեց, թե ինչպես պատանեկան խանդավառությամբ քնելու հրաման ստանալուց հետո չքնեցին. ընկերներով շատ բան ունեին իրար պատմելու: Երանի՜ նորից կրկնվեր այդ պահը: Բայց, ավա՜ղ, չար դիպվածը ամեն ինչ փոխեց: Այլևս չկային սրտացավ, կատակասեր ու չարաճճի տղերքը, որոնց հետ ժամերով խոսում էին և միմյանցից չէին կշտանում: Ասես ճակատագրի ծաղր լիներ. այժմ մենակ էր մնացել, մեկուսի, բոլորը զոհվել էին: Նրան մնում էր միայն մի բան. պետք է լուռ տաներ իր թանկ ընկերների կորստի ցավը: Ախր, ինչո՞ւ: Չ՞է որ այդ ընկերներին մի տարի էլ չկար, ինչ ճանաչում էր, բայց նրանց սիրում էր սրտի ամենանուրբ զգացումներով: Հիշեց իր ու Հայկի վերջին խոսակցությունը.

- Էդ, որ զորացրվենք, ամուսնանալու եմ, քեզ հարսանիքիս քավորն անեմ:

- Է՛, ասում ես էլի, որ զորացրվես ինձ էլ չես հիշի:

- Կհիշեմ, ախպե՛ր, եթե պետք լինի, կյանքս էլ կտամ քեզ...:

- Հայկ գիժ-գիժ բաներ մի՛ խոսա: Տե՛ս՝ ախպերդ ինչ քեֆ ա անելու քո հարսանիքին:

- Կտեսնենք: Էդ, բա որ չզորացրվե՞մ:

- Ինչի՞ պետք ա չզորացրվես:

- Չգիտեմ, Էդ, բայց էսօր, երբ նա խոսք բացեց նշանվելու

մասին, մի տարօրինակ զգացում ունեցա. ասես էդ օրը երբեք էլ չի գալու:

- Հա՛յկ, էլ չշարունակես:

- Էդ, բայց խնդրում եմ, որ մի բան լինի, լավ կնայես իրան:

- Հա՛յկ, վերջ:

Նորից, ինչպես ահասարսուռ որոտ, թնդացին կրակոցները: Թալիշի դիմացի բարձունքն արդեն գրավված էր: Երկար մարտնչելուց հետո հերոսի մահով ընկել էր Հենրիկ Ղահրամանյանը: Հենրիկի կորուստը մեծ ցավ էր ընկերների համար, սակայն պետք էր վերստին հավաքել ուժերն ու անցնել մարտի: Ավագ լեյտենանտ Հրաչի դասակը գնաց գրոհի: Դիրքը շատ կարևոր էր, քանի որ բարձրադիր էր և եթե մնար թշնամու տարածքում, ապա Թալիշը ավերած կլինեին: Մյուս կարևոր պատճառն այն էր, որ միակ ճանապարհը այդ դիրքի մոտով էր անցնում ու եթե հետ չվերցնեին, այդ դեպքում տղաներին օգնություն հասցնել չէին կարողանա:

Երբ վերև էին բարձրանում, նրանց դեմ դուրս եկան թշնամու հատուկ ջոկատայինները: Հրաչն ասաց տղաներին.

- Տղե՛րք, պետք ա բոլորին ոչնչացնենք ու առաջ շարժվենք: Էլ հետ դառնալու ճանապարհ չունենք:

- Լսում եմ:

Քառորդ ժամ կռվելուց հետո հայերին հաջողվեց ոչնչացնել թշնամուն: Նրանք շարունակեցին ճանապարհը, որը գնալով ավելի վտանգավոր էր դառնում: Տղաները քայլում էին կրակների տակ, իսկ հակառակորդը ահռելի շատ էր: Սրանց հետ էլ հայերը հաշվեհարդար տեսան: Ի վերջո Հրաչին և իր զինվորներին հաջողվեց հետ վերցնել նախորդ օրը գրավված չորս դիրքը: Հրաչը զինվորներին դասավորեց դիրքերում, իսկ ամենավտանգավոր ու դժվարին վայրը նա անձամբ գնաց՝ իր լավագույն մարտիկի՝ Գևորգի հետ:

Թշնամու տանկերը հարձակվեցին: Տանկերի արկերի ձայնը խլացնում էր ամեն ինչ: Հրաչի նպատակաուղղմամբ Գևորգին հաջողվեց ոչնչացնել հակառակորդի տանկերից մեկը: Սրանից շատ ուրախացան երկուսն էլ: Այս ամենը տեսան նաև դիրքերում եղած տղաները: Նրանք ուրախության աղաղակներ բարձրացրին: Բայց

շատ կարճ տևեց ոգևորությունը: Հակառակորդը, զայրանալով հայերի նման արարքից, մեկ այլ տանկից արկ արձակեց նրանց ուղղությամբ. ավա՜ղ, երկուսն էլ զոհվեցին: Վայրկյաններ տևած ուրախությունը փոխվեց սգի: Զինվորները ոչ միայն ռազմաճակատում անհրամանատար մնացին, այլև կորցրին իրենց երկու լավագույն ծառայակիցներին՝ ավագ լեյտենանտ Հրաչ Գալստյանին, որ իրենց համար ավագ ընկեր էր և պատրաստ էր ամեն ինչի, որ իր զինվորները ոչնչի կարիք չունենային, և գնդացրորդ Գևորգ Վարդանյանին, որ ապրելով Ռուսաստանի Դաշնությունում՝ տասնութ տարին լրանալուն պես վերադարձել էր հայրենիք՝ անպայման Հայաստանում ծառայելու համար:

Թշնամու ջոկատները գալիս էին իրար հետևից, վայրենի աղմուկ-աղաղակներով: Դիրքում եղած տղաները կրակում էին մոլեգնած: Սիրելի հրամանատարի և Գևորգի մահվան լուրը բորբոքել էր բոլորին: Նրանցից շատերը կորցրել էին բանականությունն ու ինքնատիրապետման զգացումը: Բարձրանում էին դիրքից, դառնում տեսանելի, որ չափազանց վտանգավոր էր իրենց կյանքի համար, և կրակում: Սակայն այսպես երկար դիմադրել չկարողացան: Զենքերն ու զինամթերքն արդեն սպառված էին: Օգնություն գալ չէր կարող. հակառակորդը փակել էր ճանապարհը, դա տղաները լավ էին հասկանում: Մնում էր միայն մի ելք՝ նահանջել: Բայց ինչպե՞ս կարող էին նահանջել՝ թողնելով Հրաչի ու Գևորդի դիակը թշնամու ձեռքում: Դա անկարելի բան էր: Նրանք արդեն լսել ու տեսել էին բաշիբոզուկի արած խոշտանգումները: Սակայն այլ ելք չկար: Պետք է նահանջեին: Գոնե մյուս տղաներին այդպես կօգնեին:

Գնդացրորդ Սահակյան Սարգիսը, իմանալով ընկերոջ մահվան մասին, հորդորում է մյուսներին նահանջել.

- Տղե՛րք, դուք հե՛տ նահանջեք. ես կպահեմ:

Սակայն հակառակորդի արձակած կրակը խլեց ընկերասեր հերոսի կյանքը:

Փոխգնդապետ Գևորգյանը անձնակազմը նորից բաժանում է երկու մասի: Առաջին խումբը մայոր Բորդուրյանի գլխավորությամբ մոտենում է հենակետին աջ կողմից և կրակը վերցնում իր վրա, իսկ մյուս խումբը փորձում է գրոհել, սակայն նորից ծախողվում է: Անձնակազմը դիրքավորվում է և սկսում կրակ բացել, նռնակներ նետել:

Սասունը շատ վստահ էր իրենց հաղթանակի համար: Նա ասում էր.

- Տղե՛րք, եկեք հելնենք ու միանգամից հարցերը լուծենք, պրծնենք:

Զինվորներն արդեն հոգնած էին ու ուժասպառ, բայց միակ նպատակը թշնամուն ոչնչացնելն էր: Թշնամին գրոհեց, բայց անմիջապես հետ շպրտվեց:

Ուժգին կրակի ժամանակ Սասունի ոգևորությունն ու զայրույթն այնքան էր, որ պառկած դիրքից կանգնեց ու սկսեց ամբողջ հասակով կրակ բացել հակառակորդի ուղղությամբ: Նա դուրս եկած բաց մարտի դաշտ, հերոսաբար մարտնչում էր:

- Հրամանատա՛ր, արդեն դավադիտ արին ինձ սրանք, հեսա մտնում եմ փոթեմ:

Տևական ժամանակ մարտնչելուց հետո թնամու գնդակը կպավ Սասունին: Վիրավոր հերոսին բերեցին մարտի դաշտ, ընկերներն առաջին բուժօգնություն ցույց տվեցին, բայց նույնիսկ այդ ժամանակ էլ նա ուզում էր մնալ ընկերների հետ: Սասունն ասում էր.

- Տղե՛րք, ես չեմ ուզում գնալ: Զե՛նքս տվեք, որ կրակեմ:

Փոխգնդապետ Գևորգյանը եկավ, Սասունին դրեց դոշին և սահելով՝ մեջքի վրա պառկած, մինչև ներքև իջեցրեց: Ընկերը բռնել էր Սասունի ձեռքը, իր զարկերակն էր խփում, բայց մտածում էր, որ նրանն է: Երկու-երեք հարյուր մետր նրան ոտքով տանելուց հետո բժիշկները եկան:

Առավոտյան լսվեց աղետալի լուրը. շարքային Սասուն Մկրտչյանը դարձավ հավերժի ճամփորդ: Ցասումը, հիասթափությունն ու կորստի ցավը պատեց ընկերներին, բայց պետք էր շարունակել մարտը: Տղաները նոր թափով մարտի նետվեցին:

Փոխգնդապետ Գևորգյանը նկատում է, որ երկու տանկ է գալիս իրենց օգնության: Հակառակորդը հուժկու հրետակոծում էր

ՀԴԿ-ն: Տեղի գումարտակներից մեկի հրամանատարը գալիս է այդտեղ և ասում.

- Արտյո՛մ, ամեն գնով հենակետը պետք է հետ վերցնենք: Դու հե՛տ վերցրու, իսկ ես իմ բերած անձնակազմը կդիրքավորեմ այդտեղ և կանցնեմ պաշտպանության:

Փոխգնդապետ Գևորգյանը Բորդուրյանին նորից խնդիր է տալիս, որ նույն տեղից մոտենա, կրակը վերցնի իր վրա, իսկ այդ ընթացքում տանկերն ու ականանետային հաշվարկը գնդակոծում էր հենակետը՝ թշնամու ուժերը պառակտելու, թուլացնելու համար: Այնուհետև փոխգնդապետ Գևորգյանը հրետանային հուժկու կրակի տակ շրջանցում է հենակետը և մտնում խրամատ: Հատուկ ջոկատայիններն սկսում են գրոհել: Նրանք հանդիպում են վախից իրեն կորցրած, խուճապահար փախչող թշնամուն ճակատ առ ճակատ և սկսում կրակ բացել միմյանց վրա: Մկրտչյան Անդրանիկը տեսնում է, որ իր սիրելի հրամանատարի զինամթերքը սպառվում է, իսկ հակառակորդը գալիս է նրա ուղղությամբ, ասում է.

- Հրամանատա՛ր, նռնակ եմ գցում:

Թշնամու հատուկջոկատայինը նկատում է նռնակն ու իրեն խրամատից դուրս նետում, իսկ Արտյոմը, հասկանալով, որ նռնակն ուր որ է կպայթի, շրջվում է և լիցքավորում զենքը: Նռնակը պայթում է, բայց Աստծո կամոք փոխգնդապետ Գևորգյանը չի վնասվում:

Այնուհետև Արտյոմը խրամատաբջիջի միջից տեսնում է, թե ինչպես իր ընկերներից մեկը՝ ավագ լեյտենանտ Անդրանիկ Մկրտչյանը, ձեռնամարտի է բռնվել հակառակորդի հատուկ նշանակության գրոհայիններից մեկի հետ և րոպեներ անց կարողանում է նրան պարտության մատնել: Նորից առաջ է շարժվում թշնամու ուղղությամբ և նկատում, որ մոտ չորս գրոհայիններ գալիս են իր վրա: Արտյոմը կրակ է բացում և հաշվեհարդար տեսնում նրանց հետ:

Որոշ ժամանակ անց հանդիպում են Բորդուրյանի գլխավորած անձնակազմին և միանալով նրանց՝ սկսում են կրակել փախչող թշնամու հետևից՝ մտնելով մինչև անտառ: Հետ են վերադառնում հենակետ, որտեղ գումարտակի հրամանատարն արդեն իր անձնակազմին դիրքավորել էր, անցել պաշտպանության և կրակ էր բացում հեռվում փախչող թշնամու ուղղությամբ և օգնում տղաներին:

Թալիշի դիրքերից մեկում սերժանտ Ռաֆիկ Կրպեյանի հրամանատարության ներքո եղած տանկի անձնակազմը խնդիր է ստանում գնալ օգնել տղաներին, որ հետ բերեն գրավված դիրքը: Անձնակազմի անդամներն են՝ նշանառու- օպերատոր Սահակյան Սամվելը, մեխանիկ-վարորդ Խաչատրյան Գևորգը: Զորամասի հրամանատարը նկատում է հակառակորդի տանկը և հրամայում.

- Ոչնչացրե՛ք նշանակետը:

Տղաները տեղավորվում են տանկում և գնում խնդրի կատարմանը: Առաջին անգամ ոչինչ չի ստացվում, իսկ երկրորդ անգամ Սահակյան Սամվելը խոցում է նշանակետն առաջին իսկ կրակոցով: Նրանք, խնդիրը փայլուն կատարած, վերադառնում են դիրքեր, այնուհետև նորից առաջ շարժվում՝ այս անգամ խոցելու թշնամու հետևակը: Մի քանի րոպե անց հակառակորդը, բազում զոհեր տալով, հետ է շպրտվում:

Կրտսեր սերժանտ Ռուբեն Իսկանդարյանը, լսելով տագնապի ազդանշանը, ոգեշնչում է ծառայակիցներին.

- Տղե՛րք, չվախենա՛ք թշնամու բանակից ու եկեք հնարավորինս շուտ դրանց դուրս շպրտենք մեր հողից:

Տանկի հրամանատար Ռուբենը երկար մարտնչելուց հետո անմահացավ՝ համալրելով հայրենի հողի պաշտպանության համար իրենց կյանքը տված սուրբ հերոսների շարքերը:

Կռվի ժամանակ «Սիս» բարձունքի վրա թշնամու տանկերի դեմ մարտում զոհված Հրաչ Գալստյանի, Հենրիկ Ղահրամանյանի և Գևորգ Վարդանյանի մարմինները մնացել էին այնտեղ: Արգիշտին, իմանալով այս ամենը, շատ էր ազդվել: Նա ո՛չ ուտում էր, ո՛չ քնում, ո՛չ խոսում: Ավագ լեյտենանտ Գաբոյանը որոշեց, որ պետք է գնա և բերի ընկերների մարմինները: Նա ընտրում է դասակի լավագույն վեց մարտիկներին և գնում: Ադրբեջանցիներն արդեն պատրաստ ամրացել և սպասում էին, որ հայերը գային

իրենց ընկերների մարմինների հետևից: Արգիշտին իր ջոկատով մարտի բռնվեց: Հակառակորդը հուժկու հարված ստացավ և հետ շպրտվեց: Տղաներն առաջ գնացին: Թշնամին նորից հարձակվեց: Բարձունքի ստորոտում կատաղի մարտ սկսվեց: Արգիշտին ցանկանում էր ճեղքելով հասնել այնտեղ, որտեղ իր ընկերների մարմիններն էին: Նա զինվորներից զինամթերք վերցրեց ու ճանապարհ ընկավ՝ նրանց արգելելով միանալ իրեն:

Արծվի Գաբոյանն իր դիրքից հեռադիտակով տեսնում էր այդ մարտը, բայց նա չգիտեր, որ մարտնչողը որդին էր: Արծվին հիացած էր, թե ինչպես է մարտ մղում հրամանատարը:

Բարձունքի վրա Արգիշտիին դիմավորեցին տասնյակ թշնամիներ: Նա չնահանջեց և մոտ քսան րոպե հանդուգն մարտ էր մղում: Ռադիոկապով զինվորը հաղորդում էր և լսում Արգիշտիի հրամանը.

- Խատայան, մինչև վերջ բոյ տվեք, չնահանջեք: Կատարեք իմ հրամանը, ոչ մեկդ հետ չքաշվի:

Շուրջ երկու ժամ մարտնչեցին Արգիշտիի մարտիկները, բայց հրամանատարն այդպես էլ չեկավ: Սպառելով զինամթերքը՝ նրանք հետ քաշվեցին դիրքեր:

Պայմանագրային շարքային Գեղամ Մկրչյանը, լսելով պատերազմ սկսվելու մասին, իր ծառայակիցների հետ գալիս է Թալիշ: Նրանք առաջադրանք են ստանում. պետք է գրավված դիրքը հետ առնեին: Ստացած առաջադրանքը կատարելու նպատակով նրանք համառ վճռականությամբ առաջ էին շարժվում, երբ հակառակորդի տանկից արձակված արկը ընկավ նրանց մոտ: Արկի պայթյունից առաջացած բեկորային վնասվածքից հերոսն անմահացավ:

Էդգարն անկարող էր դիմանալ այս ամենին: Նա դուրս եկավ խրամատից և սկսեց մարտը վարել բաց դաշտում: Խելակորույս աջուձախ էր վազում, կրակում, ձեռնամարտի բռնվում: Անում էր ամեն ինչ, միայն թե շատ թշնամի սպանի: Ձայրույթից ու կորստի ցավից աչքերը լցվել էին արյունով: Հայացքը փոխվել էր. ասես առաջվա խաղաղ Էդգարը չլիներ: Մազերը խառնվել էին, դեմքը կորած էր փոշու և արյան մեջ, հագուստն ամբողջությամբ պատռոտված էր: Ձեռքերի վերքերը խանգարում էին զենք բռնելուն, բայց ամեն կերպ կռիվ էր մղում: Զգաց, թե ինչպես հայտնվեց ականապատ տարածքում, միայն զգաց, որ մի բան պայթեց: Սկզբում չէր հասկանում, թե ինչ է կատարվում. ընկել էր գետին ու անզգայացել: Տևական ժամանակ հետո, երբ ուշքի եկավ, փորձեց կանգնել ու չկարողացավ. ոտքերը չէր զգում: Հայացքը ներքև հառեց ու տեսավ, որ երկու ոտքն էլ կորցրել է: Շրջվեց զենքը վերցնելու և գրպանից ընկավ սիրած աղջկա նկարը: Սիրելին այնպես անմեղ էր ժպտում իրեն, որ մի պահ Էդգարը հուզվեց: Նա այլևս չկարողացավ զսպել արցունքները և սկսեց հեկեկալ: Նույն պահին մի հեռախոսազանգ լսվեց: Ձայնը հեռվից էր գալիս, և Էդգարը ստիպված էր սողեսող մոտենալ հեռախոսին: Տեսավ այնքան սիրելի հեռախոսահամարը: Աներևակայելի արագությամբ պատասխանեց զանգին:

- Էդ, որտեղ ես, շատ անհանգիստ եմ: Սիրտս այնքան արագ է բաբախում, ասես հիմա դուրս կթռչի: Իսկ երեկ մի սարսափելի երազ տեսա: Դու մի մութ անտառում էիր՝ միայնակ: Դեմքդ ամբողջությամբ պատված էր վերքերով: Քայլել չէիր կարողանում. գոռում էիր, աղաղակում, օգնություն կանչում, բայց քեզ ոչ մեկը չէր օգնում:

- Ա՜խ, դու կանխազգում էիր գալիք աղետը:

- Ի՞նչ, ի՞նչ ասացիր:

- Եթե իմանաս, որ կորցրել եմ ոտքերս և այլևս չեմ կարող նույնիսկ ընկերներիս արյան համար թշնամի ոչնչացնել, ի՞նչ կանես:

- Կասեմ, որ չհուսալքվես: Ապրես ինձ համար, մեր երազանքների ու նպատակների համար: Դու կորցրել ես ոտքերդ, բայց ոչ սիրտդ ու հոգիդ: Իսկ ես քեզ սիրում եմ ազնիվ սրտիդ ու մաքուր հոգուդ համար: Ո՛ւժ գտիր քո մեջ պայքարելու: Դու կարող ես, ես վստահ եմ:

- Քո խոսքերն ինձ ուժ տվեցին: Խոստանում եմ, որ հետ կգամ: Չեմ թողնի, որ կամքս ենթարկվի հույզին:

- Ես հպարտ եմ քեզնով:

Էդգարն անջատեց հեռախոսը և վերջին ուժերը հավաքեց:

Սողալով մի քիչ հետ գնաց ու տեսավ ընկերներին:

- Վահե՛, այստեղ եմ, վիրավոր:

Վահեն շրջվեց դեպի ձայնն ու տեսավ անճանաչելի մի կերպարանք:

- Էդ, դո՞ւ ես: Ձայնիցդ ճանաչեցի:

- Ես եմ, արի՛, օգնի՛:

Վահեն եկավ, շալակեց վիրավոր Էդգարին ու տարավ դիրքեր: Տեսնելով նրանց՝ արագ օգնության հասան մյուս տղաները: Շտապ կապ տվեցին և օգնություն խնդրեցին: Շուտով օգնությունը տեղ հասավ: Սերը հաղթեց: Էդգարը փրկվեց: Եղանակը անբարենպաստ էր՝ անձրև, մառախուղ, ցեխ, քամի: Սակայն նույնիսկ այդ դեպքում թշնամին չէր դադարեցնում կրակը:

Երեկոյան եկավ հատուկ նշանակության ջոկատի հրամանատար Արարատ Բաղդասարյանը և ասաց.

- Հակառակորդի տանկի կրակից ունենք երկու զոհ:

Հրամանատարի այդ խոսքերից տղաները մի պահ ցնցվեցին:

- Թշնամին տանկը թողել է դաշտում: Ո՞վ կարող է կրակել:

- Ես, կգա՛մ, - ասաց Շուլին՝ առանց երկար-բարակ մտածելու:

- Մենք էլ կմիանանք Շուլիին,- ասացին սերժանտ Մարտիրոսյան Լևն ու կապիտան Սարգսյան Էրիկը:

Նրանք մարտկոցի հրամանատար կապիտան Սարգսյան Էրիկի գլխավորությամբ հատուկ նշանակության անձնակազմի և նրա հրամանատարի հետ պատրաստվեցին գիշերով դեպի մարտական դիրք գնալուն: Ապրիլի երեքի գիշերը հասան նախատեսված վայր:

Իսկ ինչպիսի՞ն էր իրավիճակը Ջաբրայիլում: Գնդապետ Արարատ Մելքումյանն իր հերոսների հետ կատարում էր ինժեներական աշխատանքներ. հրետակոծությունը շարունակվում էր:

Տանկի հրամանատար Բենիամին Եղոյանը, նշանառու-օպերատոր Վլադիմիր Ալիխանյանը, մեխանիկ-վարորդ Տիգրան Աբգարյանը ինչպես երեկ, մարտը վարեցին նույն ուժգնությամբ և հնարամտությամբ: Կեսօրին ադրբեջանական տանկեր են դուրս գալիս Լալայկայի ուղղությամբ: Բենիամինն ու իր անձնակազմի տղաները խնդիր են ստանում.

- Ոչնչացրեք նշանակետը:

Մի քանի րոպե անց նա զեկուցեց.

- Պարո՛ն հրամանատար, նշանակետը ոչնչացված է:

Երբ նրանք հետդարձ կատարեցին, որ վերադառնան դիրքեր, հակառակորդի արկն ընկավ հենց իրենց տանկի վրա և իսկույն պայթեց: Բոլորը տեսան, թե ինչպես իրենց կամքով և քաջությամբ անփոխարինելի անձնակազմը զոհվեց՝ հանուն հայրենիքի ազատության: Արցունքները խեղդեցին բոլորին, և այլևս ոչ ոք ոչինչ ասել չկարողացավ: Լռություն:

Երկու մտերիմ ընկերներ՝ Արամն ու Արամայիսը դիրքերում էին: Արամայիսն իր գրանատամյոտի մոտ էր՝ ամեն պահ պատրաստ հակահարված տալու: Հանկարծ թշնամու «գռադ» կայանքից արձակված սնարյադն ընկավ նրանց մոտ և պայթեց: Պայթյունից զոհվեցին շարքայիններ Աբրահամյան Արամն ու Միքայելյան Արամայիսը, իսկ զինվորներից մեկը՝ Գևորգը, վնասվածք ստացավ:

Ընկերները օգնության են հասնում վիրավոր զինվորին, ապա ավագ սերժանտ Արմեն Իսպիրյանը կապ է տալիս վերադասին.

- Պարո՛ն հրամանատար, վիրավոր ունենք, օգնություն ուղարկեք:

- Հասնում ենք, Իսպիրյա՛ն ջան:

Երբ հրամանատարները եկան օգնելու, որ Արմենն իջեցնի Գևորգին, հակառակորդի անօդաչու թռչող սարքը ֆիքսում է այդ պահն ու սնարյադներ գցում վիրավոր զինվորի և օգնության հասած սպաների վրա: Կրակի հուժկու տարափի ներքո ավագ սերժանտ Իսպիրյանին հաջողվում է վիրավոր ընկերոջը հասցնել շտապօգնությանը: Ճանապարհին, երբ նա վերադառնում էր ընկերների մոտ, անօդաչու թռչող սարքը նորից նշան է բռնում իր և հրամանատարների վրա: Սպառազինական գծով տեղակալ Ղազարյանն ասաց.

- Գրադի ուղղությունը մեզ վրա է:

Հրամանատար Ֆիդայանը գոռում էր.

- Իսպիրյա՛ն ջան, փախի՛, փրկվի՛:

- Ֆիդայան, արդեն ուշ ա,- ասաց Ղազարյանը:

Հրամանատարները, կարողանալով ճիշտ գնահատել իրավիճակը, Արմենին գցեցին գետին ու մարմնով ծածկեցին: Բարեբախտաբար ոչ մեկը չզոհվեց:

Հերթափոխի ժամանակ հակառակորդը ակտիվություն էր ցուցաբերում նաև «Եղնիկներ» կոչվող տարածքում՝ կիրառելով տարբեր տրամաչափի ականանետեր: Հերթափոխի ժամանակ ականանետի պայթյունից մահացու վիրավորում ստացավ Թովմասյան Մասիսը:

Երկրում անընդմեջ տեղեկություններ էին հրապարակում ադրբեջանական կողմի զինտեխնիկայի կորուստների մասին, բայց հայկական կողմի զոհերի և կորուստների մասին լռում էին: Միայն հայտնի էր, որ ուղղաթիռներով պարբերաբար Երևանի «Մուրացան» զինվորական հոսպիտալ են տեղափոխում վիրավոր զինվորներին, որոնցից շատերի վիճակը ծայրահեղ ծանր էր: Ժողովուրդը խմբվել էր հոսպիտալի առաջ: Նրանք ջանում էին վայրկյան առաջ տեղեկություն իմանալ վիրավորների վիճակի մասին: Ոմանք գնացին արյուն տալու հերոսներին, ոմանք էլ միացան կամավորական ջոկատներին ու պատրաստվում էին մեկնել Արցախ: Այդ ժամանակ, ինչպես մի ահասարսուռ որոտ, լսվեց բոթը: Վիրավորներից մեկը փակեց աչքերը հավիտյան քնով: Վայնասունը, ողբն ու զայրույթը խառնվեցին իրար: Մի կողմից զոհված հերոսի մոր սրտակեղեք ողբը, մյուս կողմից կոտրված ամբոխի հուսահատական մրմնջյունները ստեղծել էին տենդագին իրավիճակ: Նույնիսկ մանկահասկ երեխաները, որոնք չէին էլ հասկանում, թե ինչ է կատարվում, լաց էին լինում և զինվորների համար Աստծուց պահպանություն աղերսում:

Երեկոյան երկրի նախագահը Ազգային անվտանգության խորհրդի նիստ գումարեց: Իրավիճակը որակվեց հազար ինը հարյուր իննսունչորս թվի զինադադարի կոպիտ խախտում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ լայնածավալ հարձակում: Ապա հայտարարեց կորուստների մասին.

- Ունենք տասնութ զոհ, երեսունհինգին մոտ վիրավոր:

Ադրբեջանական զինուժը տվել էր երկու հարյուրից ավելի կորուստ: Ամեն բան արդեն հայտնի էր. թեժ մարտեր էին ընթացել առաջնագծի հարավային և հյուսիսարևելյան ուղղություններով:

* * *

Ապրիլի չորսին Ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում մարտական գործողությունները շարունակվում էին: Հակառակորդը կիրառում էր հարյուր հիսուներկու մմ հրանոթներ, «Գրադ» և տանկեր:

Առավոտվանից առաջնագծի զինվորներին օգնության ակցիաներ սկսվեցին Երևանում, Ստեփանակերտում և Հայաստանի ողջ տարածքում: Բոլորը մի բռունցք դարձած կամ առաջին օգնության իրեր և սնունդ էին հավաքում առաջնագիծ ուղարկելու համար, կամ շտապում հիվանդանոցներ՝ վիրավորներին արյուն տալու: Իրավիճակը չափազանց լարված էր, բոլորի աչքերը՝ արցունքոտ: Ռազմաճակատ մեկնեցին նաև հոգևորականներն ու կանայք: Եկեղեցիները բազմամարդ էին՝ լեցուն վշտից իրենց կորցրած հավատացյալներով: Մնացել էր միայն բողոքն ու հույսը՝ ուղղված առ Աստված:

Թալիշում առավոտյան ավագ սերժանտ Շուլի Հակոբանը նորից դիտարկում կատարեց, վայրկյանների ընթացքում խրամատի մեջ հրթիռային համալիրը լիցքավորեց և խրամատից դուրս եկավ: Դիմացի դիրքը չափազանց մոտ էր: Մի քիչ առաջ գնաց, պառկեց ու կրակեց տանկի ուղղությամբ: Առաջին կրակը շեղ էր: Նա որոշեց նորից կրակել: Թշնամու տանկերը սկսեցին հրետակոծել դիրքերը: Շուլին արագ լիքավորեց և նորից կրակեց: Ավագ սերժանտ Հակոբյանը խփեց ուղիղ այն տանկին, որից զոհվել էին ընկերները: Նրա ուրախությունը անսահման էր: Առանց հաշվի առնելու, որ խրամատից դուրս է եկել ու դիմացից էլ կրակում են, կանգնեց և գոռաց.

- Խփել եմ, խփել եմ:

Հետևից ձայն տվեցին.

- Շուլի՛, իջի՛ խրամատ:

Երբ իջավ խրամատ, հատուկ նշանակության ջոկի հրամանատարն ու մարտկոցի հրամանատարը համբուրեցին հերոսի ճակատը՝ ասելով.

- Կեցցե՛ս...

Շուլին նույն տեղից ևս երկու տանկ խոցեց և բարձրացավ նայելու. դաշտում արդեն տանկ չկար: Թշնամին նահանջեց...

Հայկական ուժերին հաջողվեց հետ վերցնել թալիշյան դիրքերից երկուսը: Հակառակորդը փորձում էր այնտեղից դուրս բերել իր թողած դիակները, բայց մեր տղաների շնորհիվ նրանք իրենց նպատակին չհասան: Հակառակորդի գրոհը կասեցվեց...

Մարտական գործողությունների ժամանակ, չկատարելով հրամանատարի նահանջի հրամանն ու անտեսելով թշնամու ինտենսիվ հրետակոծությունը, Նարեկը նետվեց մարտի: Նա, աչքի առաջ ունենալով ազատամարտիկ հոր կերպարը, վառվում էր հայրենասիրական ոգով: Աներևակայելի արագությամբ կրակում էր թշնամու ուղղությամբ ու կրակած փամփուշտներից ոչ մեկը անվրեպ չէր լինում: Սակայն թշնամու գնդակն ընկերոջ կյանքը խլեց: Հակառակորդի բանակը մոլեգնած առաջ էր շարժվում: Նրանք արդեն հասնում էին դիրքեր: Նարեկը զայրացավ: Վերցրեց «պլիմյոտն» ու սկսեց կրակել: Հրամանատարը գոռում էր.

- Նարե՛կ ջան, փախի: Նարե՛կ հերիք ա, գնա՛:

- Չէ, կամադիր ջան, քեզ մենակ չեմ թողի:

- Նարե՛կ փախի՛, փրկվի՛: Կատարի հրամանը:

- Չէ, կամանդի՛ր ջան: Չեմ գնա:

Որոշակի ժամանակ հերոսաբար մարտնչելուց հետո թշնամու արկը խլեց նաև կյանքով ու եռանդով լեցուն հերոսի կյանքը...

Հարութն ու Սեյրանը միասին էին: Նա Սեյրանին ասաց.

- Գնա՛, Վրեժին կանչի:

Վրեժը Սեյրանի եղբայրն էր, որ նրանցից փոքր-ինչ հեռու էր դիրքավորվել: Վրեժը եկավ: Հարութը շատ ուրախացավ՝ տեսնելով սիրելի ընկերոջը:

- Վրե՛ժ, էլ տեղ չգնաս:

- Չեմ գնա, չէ՛, - ասաց Հարութը ծիծաղելով:

Բայց հակառակորդի նկարահանող սարքն արդեն ֆիքսել էր հերոսներին: Սնարյադն ընկավ զինվորների վրա: Վրեժ Սարգսյանն ու Հարություն Աբրահամյանը բռնեցին երկնի ճամփան...

Սեյրանը նրանցից հեռու էր: Եղբոր մահվան լուրը լսելուն պես փորձում էր որպես առաջ հասնել, բայց կրակոցները սաստիկ էին: Նրան թույլ չտվեցին առաջ շարժվել: Ամենածանր պարտականությունն իր վրա վերցրեց Վիգենը՝ Հարութի և Վրեժի ընկերը: Նա զոհված ընկերների դիակները դիրքերից իջեցրեց:

Ենթասպա Գագիկ Մելքոնյանը Քելբաջարից տուն էր վերադառնում, երբ հրամանատարը զանգեց ու ասաց.

- Գագի՛կ, հարձակվել են մեր ժողովրդի վրա Թալիշում:

- Հրամանը կատարված է:

Նա իսկույն հետ վերադարձավ, գնաց Թալիշ և նետվեց մարտի: Գագիկն իր զինվորներին հրամայում էր հետ գնալ.

- Դուք հետ գնացեք, ես կպաշտպանեմ, ես դիպուկահար եմ:

Զինվորներին հետ ուղարկելուց հետո նա հակառակորդի հարվածներն իր վրա է վերցնում: Նրա արձակած գնդակները մեկը մյուսի հետևից խոցում էին անհավատներին: Թշնամին, տեսնելով, որ չի կարողանում կռվել, սկսում է արկեր կիրառել: Արկերից մեկն ընկնում է Գագիկի վրա: Վերջինս մարտիրոսվում է:

... Խրամատում մարտական ծառայություն էր իրականացնում ավագ ենթասպա Դավիթ Գասպարյանը: Արդեն երեք օր էր, ինչ համառ պայքար էր մղում թշնամու՝ մի քանի անգամ մեզանից ավել հատուկջոկատայինների հետ, սակայն թշնամին այդպես էլ չէր կարողանում առաջ գալ: Բայց անօրենը, տեսնելով, որ զենքով ոչնչի հասնել չի կարողանում, անցավ արկակոծության: Արկերից մեկի պայթյունը ճակատագրական դարձավ ավագ ենթասպա Դավիթի համար: Նա ճանապարհ ընկավ դեպի երկինք:

Ինչպես **Ջաբրայիլի** բոլոր դիրքերում, այնպես էլ 124 մարտական դիրքում իրավիճակը լարված էր: Հրթիռակոծություն, կրակոցներ, աղմուկ-աղաղակ, վիրավորների խուլ հեծկլտանք: Այո՛, այն ամենը, ինչ պատերազմը բերում է իր հետ:

Ավագ սերժանտ Վիգեն Հարությունյանն իր տասհոգանոց

անձնակազմի և մի քանի կամավորի հետ դիրքերում էր: Պատերազմի լուրը լսելուն պես՝ համապատասխան հրաման ստանալուց հետո, անձնակազմին դիրքավորում է: Հակառակորդը կրակում էր ծանր զինտեխնիկաներով, որոնց ձայնը շրջապատում ամեն ինչ խլացնում էր: Կրակի հուժկու տարափ էր տեղում նրանց գլխին՝ ժամանակ առ ժամանակ լուսավորելով և տեսանելի դարձնելով թշնամու արած վայրագությունների հետևանքները: Անցնում էին օրերը՝ կռիվ տալով և ուժասպառ: Որպես դիրքի ավագ՝ վտանգավոր հատվածները Վիգենն այցելում էր անձամբ՝ ջանալով իր զինվորներին հնարավորինս հեռու պահել վտանգներից:

Ապրիլի չորսն էր: Հակառակորդը շարունակում էր հրանոթներից արկակոծել առաջնագծերն ու մերձակա բնակավայրերը: Նույնիսկ ադրբեջանական կողմը կիրառել էր ТОС 1 հրանետ, որը շարքից հանել էին հայ հրետանավորները:

Վիգենն ու Վարդանը միասին էին՝ հոգնած, ուժասպառ, բայց մարտական ոգին՝ անկոտրում:

- Վարդան, սիգարետը պրծել ա, կգնա՞ս բերես:
- Ախպե՛ր, հոգնած եմ գնա արի:
- Լավ:

Վիգենը մի քանի քայլ էր հեռացել Վարդանից, երբ սնարյադն ընկավ վերջինիս մոտ: Փոշին ու կրակը անտեսանելի դարձրին ամեն բան: Դիրքում սկսվեց խառնաշփոթ: Ավագ սերժանտ Հարությունյանն ուշքի գալով և տեղեկանալով, որ Վարդանն այլևս չկա, նետվում է ընկերոջ դիակը բերելու: Բազում տանջանքներից հետո Վիգենը վերադարձավ՝ ընկերոջ անշնչացած մարմինը գրկում: Հուզմունքը պատեց ամենքին, վշտից ասես անզգայացան զինվորները, բայց...շարքային Վարդան Թադևոսյանը մարտիրոսվեց՝ իր սուրբ արյունը հայոց հողին խառնելով:

Մայոր Հովսեփ Մայիլյանն արդեն քանի օր էր՝ իր քաջերի հետ համառ պայքար էր մղում: Նա օգնում էր բոլորին, քաջալերում: Կռվի ժամանակ տեսավ, թե ինչպես տանկերից մեկը խափանվեց: Առանց երկմտելու, չընդհատվող կրակի տակ նա առաջ էր սլանում: Հասնելով տանկին՝ բարձրացավ տանկի վրա այն նորոգելու, բայց

թշնամու արձակած հերթական արկը խլեց հերոսի կյանքը:

Ադրբեջանական հրամանատարությունը շարունակում էր հարձակումը: Թշնամու ճանապարհին մի անհաղթահարելի խոչընդոտ կար կանգնած՝ բարձունքը, որի վրա ծանր հրետանու հարված տեղաց: Արկերից մեկի պայթյունից զոհվեցին երեք հերոսները՝ Նվեր Սիմոնյանը, Ղարիբ Սահակյանն ու Ազնաուր Բալայանը:

Արարատ Մելքումյանը հատուկ ջոկատի հետ մարտնչում էր Լյալյա Իլյագի բարձունքի ստորոտում: Հայ մարտիկների վրա հրետակոծության տարափ տեղաց: Նա թշնամու կրակոցից ծնկի հատվածում վիրավորվեց, բայց մարտական ոգին մնաց անկոտրում: Մելքումյանը ոչ մի կերպ չէր համաձայնվում լքել մարտի դաշտը, բայց երկրորդ անգամ վիրավորվելուց հետո մարտիկները նրան դուրս բերեցին թիկունք:

Մարտակերտում իրավիճակը խառնիխուռն էր: Մայոր Ռուդիկ Մովսեսյանը խելահեղ մարտ էր վարում: Նա իր զինվորներին ոգեշնչում էր ու հետները հավասար մարտնչում: Նկատելով թշնամու անօդաչու թռչող սարքը՝ ուժգին կրակ է բացում, որ խոցի այն, սակայն սարքը փոխել է ուղղությունը, հարվածել պատին ու պայթել: Պայթյունից առաջացած բեկորային վնասվածքներից էլ զոհվեց մայոր Մովսեսյանը: Հակառակորդը, միայն սահմանում ավերածություններ գործելով, չբավարարվեց: Նա Մարտակերտի ճանապարհին անօդաչու սարքով ռմբակոծեց Սիսիանի ջոկատի ավտոբուսը: Պայթյունի հետեւանքով զոհվեցին սիսիանցի ազատամարտիկներ Մայիս Միրզոյանը, Արմեն Բեգլարյանը, Եղիշե Նիկալյանը, Սեդրակ Ասրյանը, Սերգեյ Դանոյանը, Գագիկ Փարսադանյանը, Դավիթ Սարգսյանը, Արմեն Հովհաննիսյանը և Կարո Համբարձումյանը:

Մատաղիսում ևս մարտերը շարունակում էին թեժ ընթանալ: Արտակի, Միշայի և Դավիթի տանկը գրոհում է թշնամու մարտական դիրքի վրա տղաներին օգնելու համար: Առաջին գրոհի ժամանակ տանկը խնդիր ունեցավ. նրանք ստիպված եղան հետ վերադառնալ: Այնուհետև նորոգեցին տանկն ու գնացին մարտական խնդրի կատարմանը: Հակառակորդը, սեփական ուժերով

դիմադրել չկարողանալով, դիմեց անօդաչու թռչող սարքերի օգնությանը: Նրանցից մեկի արձակած արկի պայթյունից էլ հերոսները զոհվեցին:

* * *

Ապրի՛լ... Ապրելու ապրիլ...

Կատաղի գոյամարտի արդեն չորրորդ օրն էր: Անընդմեջ կրակոցները, վայրենի աղմուկ-աղաղակներն արդեն սովորական էին դարձել: Ասես հենց այսպես էլ պետք է լիներ: Զինվորների ականջներում անընդհատ զոհված ընկերների վերջին խոսքերն էին հնչում: Բոլորը մի բան էին պահանջում գալիք սերունդներից.

- Չնահանջել, ոչ մի կտոր հող թշնամուն չթողնել, հայրենիքին անմնացորդ սիրել:

Եվ սահմանում կանգնած հերոսներից յուրաքանչյուրը շատ լավ էր գիտակցում իր անելիքը, իսկ վախի ու սարսափի մասին նրանք նույնիսկ մոռացել էին:

Աներևակելի բան է. տասնութ, տասնինը, քսան տարեկան պատանին այնպես էր կռվում, ասես մի ամբողջ կյանք է անցկացրել մարտերում:

Սարսափելի է, երբ ուրախությունն ու տխրությունը միախառնվում են իրար. այդ ժամանակ զգացմունքները կառավարելը դառնում է անհնարին: Տարիներ առաջ՝ մարտի դաշտում, զոհվել էր Էդգարի հորեղբայրը: Մի քանի տարի անց՝ նույն օրը, այդ ընտանիքում արու զավակ ծնվեց: Վառվռուն ու կյանքով լեցուն երեխային կոչեցին Էդգար: Ընտանիքն իր առաջ նպատակ դրեց՝ հայրենասիրական ոգով լեցուն զինվոր դաստիարակել: Տարիներ շարունակ նրա մեջ ատելություն էին սերմանում դեպի ժողովրդի թշնամին: Եվ ո՛վ կպատկերացներ. բախտի անիվն այնպես պտտվեց, որ Էդգարը պատերազմի մեջ ընկավ:

Հոսպիտալում պառկած՝ նրա աչքի առաջ հորեղբոր նկարն էր՝ զինվորական համազգեստով, բարի ժպիտով: Էդգարը հիշեց տատի պատմածները հորեղբոր զոհվելու մասին և ցանկացավ

մեկ անգամ ևս լսել այդ: Հանգեց մորը.

- Մա՛մ, ո՞նց ես:

- Լավ եմ, տղե՛ս: Քանի օր ա քեզնից տեղեկություն չունեմ: Ինչ լավ ա, որ զանգեցիր: Ծառայակիցներդ ո՞նց են: Տղե՛ս, մեզ հասած նորությունները մեկը մյուսի հետևից բոթաբեր են:

- Մա՛մ, ուզում եմ տատի հետ խոսեմ, հեռախոսը տո՛ւր նրան:

- Տղե՛ս, բայց հարցիս չպատասխանեցիր:

- Մա՛մ, տո՛ւր նրան...

- Էդգա՛ր ջան, ո՞նց ես:

- Տա՛տ, կպատմե՛ս, թե ոնց զոհվեց հորեղբայրս:

- Է՛, Էդգար ջան, դու դա գիտես, ինչի՞ ես հարցնում:

- Մի անգամ էլ պատմի:

Տատը սկսեց պատմել այնպես, ինչպես ամեն անգամ սկսում էր իր պատմությունը:

- Էդգարս ջահել էր, շա՛տ ջահել: Հենց իմացավ կռիվ ա սկսվե, գործերը թողեց ու գնաց: Ասի «ա՛յ բալա, մի՛ գնա»: Ա՜խ, մոր սիրտ էր, մի բան զգում էր: Էն էլ ինձ չլսեց, գնաց: Ասում են՝ շատ քաջ էր կռվում. ում ոնց կարում էր՝ օգնում էր: Ընկերը կռվի վախտ զոհվում ա: Երեխես չի իմանում, որ զոհվել ա: Ինքը գիտի վիրավորվել ա: Գնում ա, որ օգնի, բայց...

- Տա՛տ, ես արդեն պիտի գնամ, հետո կզանգեմ, - ասաց Էդգարը հուզված ու անջատեց:

Ինչո՞ւ չկարողացավ լսել այս պատմությունը, ի՞նչը ստիպեց նրան կիսատ թողնելով տատի խոսքը, հեռախոսն անջատել:

Էդգարը հիշեց իր զոհված ընկերներին: Իրականում նա չէր էլ լսել տատի պատմածը: Միտքն անցել էր հիվանդանոցի պատերից ու հասել դիրքեր՝ այնտեղ, որտեղ ընկան տղերքը: Նորից կոկորդում զգաց այն խեղդոցը, որը զգացել էր ընկերոջ մահը Հայկին ասելիս: Նրան թվաց, թե ամբողջ աշխարհը ծիծաղում էր իր վրա: Նա ցանկանում էր կա՛մ զոհվել, կա՛մ ապրել ընկերների հետ: Արցունքները զսպել չկարողացավ. վերմակը քաշեց գլխին ու սկսեց արտասվել:

Բեռնատարների երիտասարդ վարորդները կրակի հուժկու

տարափի ներքո տղաներին սնունդ էին հասցնում: Նրանց ոչինչ չէր խանգարում. ասես նույնիսկ չէին էլ նկատում թշնամու անօդաչու թռչող սարքերի հարվածները: Գոռ Կիրակոսյանը լավ էր հասկանում, որ ընկերները դիրքերում մարտնչում են, նրանց սնունդ է պետք և ամեն կերպ պետք է հասցնել:

Առավոտյան Գոռ Կիրակոսյանը անտեսեց հուժկու կրակն ու դուրս եկավ առաջնագիծ: Գոռը սնունդ տարավ այն դիրքը, որտեղ Վլադիմիր Նարինյանի ստորաբաժանումն էր:

Սարսափելի հրետակոծություն էր: Վլադիմիրն արգելեց իր զինվորներին լքել թաքստոցներն ու անձամբ գնաց օգնելու Գոռին՝ բեռնաթափելու սնունդով լի մեքենան: Սակայն հակառակորդի արկը նույն պահին ընկավ իրենց կողքին և պայթեց: Ավա՜ղ, երկուսն էլ նահատակվեցին: Գոռն ինքն իրեն տված խոսքը կատարեց. հացը տղերքին հասցրեց...

Արդեն լցվել էր զինվորների համբերության բաժակը: Նրանց մի թույլ կայծ էր պետք, որ նետվեն առաջ՝ այս չորս օրվա ընթացքում իրենց մեջ կուտակված վրեժը թշնամուց լուծելու համար, երբ զանգ եկավ.

- Դադարեցնել բոլոր տեսակի գործողությունները: Հրադադար է:

- Լսում եմ:

- Տղե՛րք, կրակոցները դադարեցրեք, հրադադար ա՛:

Զինվորի ձայնը թնդաց ամբողջ դիրքում: Տղաների դեմքերը զարմանքից գունատվեցին:

- Ո՞նց, դրանց էլ չենք խփելո՛ւ, - ասաց զինվորներից մեկը զայրացած:

- Այսինքն էլ զոհ չի՛ լինելու, - բացականչեց մյուսը:

Տղերքը ոգևորված իրար գրկեցին, ուրախության աղաղակներ բարձրացրին: Ոգևորությունն այնքան էր, որ նույնիսկ շատերը հուզվեցին: Կռիվն ավարտված էր, սահմանը՝ անառիկ: Նրանք շտապեցին տեղեկություն ստանալ վիրավորների մասին:

- Պարո՛ն հրամանատար, վիրավորները ո՞նց են:

- Ձեր ընկերների վիճակը գնալով լավանում ա, հանգի՛ստ եղեք, տղե՛րք ջան:

- Պարո՛ն հրամանատար, նրանք էլ մեր ընկերները չեն: Այսուհետև սահմանին կանգնածները ծառայակից ընկերներ չեն: Հիմա սահմանը պահելու ենք ախպերներով, որովհետև մենակ պատերազմից հետո հասկացանք, թե ինչքան թանկ ա կողքիդ կանգնածի կյանքը: Մենք նույն արյունն ենք:

- Ապրե՛ս, տղե՛ս: Հայ ազգին հաղթել հնարավոր չի, քանի ձեր նման հերոսները կանգնած են սահմանին: Փառք ու պատիվ ձեզ:

- Կեցցե՛ հայ զինվորը:

- Տղե՛րք, ես ձեր դուխով ցավը տանեմ:

- Եկեք հիմա աղոթենք: Աստված էս անգամ էլ մեզ օգնեց:

- Հայր մեր որ յերկնս ես,
սուրբ եղիցի անուն Քո:
Եկեսցէ արքայութիւն Քո:
Եղիցին կամք Քո
որպէս յերկինս եւ յերկրի:
Զհաց մեր հանապազորդ
տուր մեզ այսօր:
Եւ թող մեզ զպարտիս մեր,
որպէս և մեք թողումք
մերոց պարտապանաց:
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն:
այլ փրկեա զմեզ ի չարէ:
Զի քո է արքայութիւն
եւ զօրութիւն եւ փառք
յաւիտեանս
Ամէն:

Այս ուրախալի լուրը կայծակի պես ճեղքեց սահմանն ու հասավ հանրությանը: Ուրախությունից իրեն կորցրած ամբոխը դուրս էր գալիս փողոց ու գոռում.

- Ժողովո՛րդ, հրադադար ա, հրադադար: Հայ ա՛զգ, ուրախացի՛ր, քո զինվորը հաղթեց:

Բոլորը նետվեցին եկեղեցիներ՝ ամենակարող Տիրոջն իրենց շնորհակալությունը հայտնելու: Պատարագ մատուցվեց: Հազարավոր ձեռքեր երկինք կարկառած՝ ջերմեռանդ աղոթում էին, եկեղեցու բակում մատաղ անում...

Որոշ ժամանակ անց պատերազմի մասնակիցներից շատերը զորացրվեցին: Զորացրվեց նաև Էդգարը: Գյուղ մտնելուն պես աչքերի առաջ հառնեց Մասիս սարի վեհ կերպարանքը: Սարը հուզեց Էդգարին. նա հիշեց իր խոստումը՝ տրված վերջին անգամ արձակուրդից բանակ վերադառնալիս. «Եթե հարկ լինի, իմ կյանքն էլ կտամ հայ ժողովրդի՝ դարեր շարունակ կրած տառապանքի այս անխոս վկայի ազատության համար»: Իր կամքից անկախ նա բղավեց.

- Ես խոստացա, որ իմ կյանքը կտամ, բայց իմ ընկերները զոհվեցին: Այսօր խոստանում եմ, որ եթե արու զավակ ունենամ, նրան ծառայության կուղարկեմ այն գիտակցությամբ, որ ամեն հերոսի թափած արյան կաթիլի համար վրեժ լուծի: Եկող սերունդը պատերազմի մասնակիցների որդիների սերունդն է լինելու: Նրանք կժառանգեն հայրերի մարտական ոգին ու հայրենասիրությունը:

Այս խոսքերից հետո Էդգարն ընկավ այն հողի վրա, հանուն որի զոհվել էին ընկերները և հողը թրջեց արցունքներով:

Եթե Էդգարը երազում է արու զավակ ունենալ, ծառայության ուղարկել, վրեժ լուծել, ես երազում և աղերսում եմ Քեզ, Աստվա՛ծ իմ բարի, ողջ աշխարհին խաղաղություն ու բարությո՛ւն պարգևիր:

Երկնակամարում արև ու ծիածան լինի, անձրևը կյանք տա հողին ու լվանա արյան հետքերը, մայրերը ժպտան, մանուկները բազմանան:

Առավել ուժգնությամբ չորս օր տևած այս պատերազմը պատմության մեջ մնաց «Ապրիլյան քառօրյա պատերազմ» անունով: Ավարտելով իմ փաստագրությունը՝ սրտի թրթիռով ու դողով թղթին ու իմ սիրելի ընթերցողին եմ հանձնում Ապիլյան պատերազմում անմահացած Հերոսների անունները: Նրանք չմեռան, այլ անմահացան: Հիշե՛նք նրանց անուն առ անուն...

ԷՄՄԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՊՐԵԼՈՒ

պոեմ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am